

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

**ՏՐՈՒԱԾ
 «ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
 ՉԱՓԱՆԻՇ»Ի ՄԱՍԻՆ**

Ժողովրդական առածը պիտի ըստը. «տասը չափե, մէկ կտրե»:

Կեանքէն վերցուած այս իմաստուն ասացումը արեւելի լիարժէք տարողութիւն կը գգնուի, երբան կ'ընդգրկէ ընդհանրական երեւոյթ: Այսինքն, կ'ունենայ միութեան կամ կուսակցական կամ հանրային որեւէ շարժման խորք: Այդ պարագաներուն, պէտք է աւելի գգոյշ, պատասխանատու եւ շրջահայեաց գտնուիլ, որովհետեւ, անոնց կողմէ ըսուած մէկ մի դրական կամ ժխտական խօսք, գնահատանքի գիր, բանաձեւուած արտայայտութիւն՝ քարոյական հարկադրանքի տակ կը դնէ գիրքնէ, յարգելու գանձնէ: Հրապարակաւ, կարգին չի մտածուած, հապենպ տնօրինում մը, կը նմանի փոստարկի ճգումը մամակի, գոր կարելի չէ ետ քերել: Յետագային, ուշ կամ կանուխ, տեղի-անտեղի, ինչ-ինչ պատմականորով գանձնէ ժխտելը, հակառակը բնութիւնը, չիմեղանալը, պատասխանատուութիւնը ասոր կամ անոր վրայ բեռնելը՝ պիտի ենթադրեն լրջութեան պակաս, պատասխանատուութեան գիտակցութեան անկում, կամ բեքեւամտութիւն: Պիտի նմանէր տուած նուէրդ ետ պահանջելու պէս բանի մը՝ որ անշուշտ պարգապէս կը մար ծիծաղելի դարձնել պատասխանատուները:

Մեր առաջին մտորումը այս եղաւ, երբ մեր ձեռքը անցաւ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի պաշտօնաթերթի՝ «Մասիս»-ի օրէն իր կուսակցական պատկանելիութեամբ բոլորիս յոյժ ծանօթ - «Ասպարէզ» օրաթերթի Ուրբաթ, Յունիս 19, 2009 թուակիր համարը:

«Օրը Օրին»-ի մէջ ինքզինք ժխտող առաջնորդող յօդուած մը լոյս ընծայուած էր, որ գրաւեց մեր ուշադրութիւնը, պատմադրականորով մեր այս սիւնակի խմբագրութեան, որ աւելի արտացոլման արժանի է մեզի պաշտօնակից, յարգելի օրկանի մը կողմէ կատարուած ինքնաժխտումի արարքի մը, որ մեր գնահատութեամբ, աւելի կը բացատրուի վերը նշուած փոստարկի նետուած մամակի օրինակով:

«Ասպարէզ»-ի 16 Յունիս 2009 թ. համարով, «Օրը Օրին» մեզի համար անակնկալ, այլ գնահատելի Սիւնակը խմբագրուած էր անմամական մահով մեզմէ յաւելտ քաղաքում ձեռնարկուած հասարակական գործիչ, հրապարակա-

ԱԶԱՏ ԱՐՉԱԿՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ՝ «ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ Է ՍԿՍՈՒԵԼՈՒ»

Հայաստանի Ազգային Ժողովի կողմէ համաներում յայտարարուելէ ետք, Երկուշաբթի, Յունիս 22-ին ազատ սկսան արձակուելի 2008-ի նախագահական ընտրութիւններէն ետք ձերբակալուած քաղաքական բանտարկեալները:

Առաջին ազատ արձակուողները եղան նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեան, պատգամաւորներ՝ Միասնիկ Մալխասեան ու Յակոբ Յակոբեան եւ Սուրէն Սիրունեան:

Ազատ արձակուած ընդդիմադիր գործիչները իրենց կողմնակիցներու ընկերակցութեամբ ուղղուեցան Մարտի 1-ի արիւնալի դէպքերու վայրը՝ Միասնիկեանի արձանի մօտ եւ ապա Սարեանի արձանի մօտ, ուր տեղի ունեցաւ տօնախմբութիւն: Հոն ժամանեցին նաեւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան եւ ընդդիմադիր այլ գործիչներ:

Ալեքսանդր Արզումանեան արձանի մօտ յայտարարեց ըսելով՝ «Պայքարը նոր է սկսուելու»:

Նախ քան ազատ արձակուումը, Երեւանի Կենտրոնի եւ Նորք-Մարաշ համալսարանի ընդհանուր իրաւաբանական դատարանը Ալեքսանդր Արզումանեանին 5 տարուայ եւ Սուրէն Սիրունեանին 4 տարուայ բանտարկութեան: Հա-



Իրենց ազատութիւնը վերագտնելէ ետք, ձախէն՝ Սուրէն Սիրունեան, Յակոբ Յակոբեան, Ալեքսանդր Արզումանեան եւ Միասնիկ Մալխասեան

մաներման որոշումը կը նախատեսէ ազատ արձակել անոնց, որոնք 5 տարի եւ կամ աւելի նուազ բանտարկութեան դատապարտուած են: Նոյնը պատահեցաւ նաեւ Միասնիկ Մալխասեանին եւ Յակոբ Յակոբեանին, որոնք եւս ազատ արձակուեցան դատարանի դաճիւճէն:

Սակայն, մէկ այլ պատգամաւոր՝ Սասուն Միքայէլեան արժանացաւ իշխանութիւններու վրէժխնդիր վերաբերմունքին եւ դատապարտուելէ ետք 8 տարուայ բանտարկութեան, դուրս մնաց համաներման օրէնքէն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄՆԱԼ ԵՐՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՆՎ) Զորքշաբթի, Յունիս 24-ին որոշում կայացուց Հայաստանը պահել հսկողութեան տակ:

ԵԽՆՎ-ի լիազօւմար նիստի ընթացքին Հայաստանի հարցի քննարկումի ժամանակ եղան հակասական յայտարարութիւններ: Ելույթ ունեցողներէն ոմանք լիչեցին Հայաստանի մէջ արձանագրուած դրական տեղաշարժը, միւս մասը ընդգծեց թերութիւնները՝ մասնաւորապէս 2008 թուականի Մարտի 1-ին 10 մարդու սպանութեան չբացատրուած ըլլալու փաստը, մամուլի ազատութեան վիճակը, արդարադատութեան եւ ոստիկանութեան, դատախազական համակարգի թերութիւնները:

Հսկիչ խումբի Հայաստանի հարցով համազեկուցող Ժորժ Կոլուժբիէ ողջունեց քրէական օրէնսգիրքի մէջ կատարուած փոփոխութիւնները եւ այն քաղաքական կամքը, որ կը դրսեւորէ իշխանութիւնը՝ համաներում կիրառելով նաեւ անոնց նկատմամբ, որոնք այժմ հետախուզման մէջ են, բայց կը ներկայանան իշխանութիւններուն մինչեւ Յուլիս 31-ը:

ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ ՅԵՏ



Ձախէն՝ նախագահ Միշէլ Սըլէյման, Ընկ. Սեպուհ Գալիֆեան, Ընկ. Տոբ. Եղիկ Ճէրէճեան եւ իրաւաբան Սերժ Թուրսարգիսեան

Երկուշաբթի, 22 Յունիսին, Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան նորընտիր երեսփոխաններ Ընկ. Սեպուհ Գալիֆեան, Մեթր Սերժ Թուրսարգիսեան եւ նախկին երեսփոխան Ընկ. Տոբ. Եղիկ Ճէրէճեան հանդիպում ունեցան հանրապետութեան նախագահ Զօրավար Միշէլ Սըլէյմանի հետ:

Հնչակեան երեսփոխանները նախ շնորհակտեցին նախագահ Սըլէյմանը թափանցիկ, ժողովրդավարական եւ անկողմնակալ խորհրդարանական ընտրութիւններ կայացնելու կապակցութեամբ:

Ապա խօսակցութեան նիւթ դարձան երկրի քաղաքական յառաջիկայ իրադարձութիւնները՝ խորհրդարանի խօսնակին ընտրութիւնը, նոր կառավարութեան կազմութիւնը, քաղաքական նոր ուժերու բաժանումը, ինչպէս նաեւ կրօնական յառաջիկայ կազմը: Հնչակեան երեսփոխանները նախագահ Սըլէյմանին յայտնեցին կուսակցութեան ամբողջական նեցուկը անոր վարած հաւատարակչութեան եւ շրջակայեաց քաղաքականութեան հանդէպ:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՔՈՒԷԻՍ ՓՈՒՍԱՐԵՆ

Ազգային կոչումը ժողովրդականացրել է եւ անմիջապէս մեղաւորից: Այն, որ ի հեճուկս համաներման արարի, մեր երկրում օրէնքի թերիշխանութեան եւ իրաւունքների անհաւասարութեան պարտադրանքով յարատեւելու է համոզմունքի համար կայանաւորուած քաղաքացիներ ունենալու հակահայկական խարանը, յետ-խորհրդային Հայաստանի ողջ հետազոծով ապացուցուած ու արդէն կայացած իրողութիւն է:

Մանդատներից մեր պատգամաւորական գործընկերների կամայական բռնազրկումը մանր-խորամանկ, քրէածին մտքերի մարտնչող պտուղն է: Նախագահականում, խորհրդարանում կամ այլուր ո՞ր բարձրաստիճան պաշտօնեան է, ով, մեղմ ասած, իր կամ մերձաւոր բարեկամի օրինակով նուազ յանցագործ է, քան պատիւի վրէժխնդրութեամբ պատժուող մեր պատգամաւորները: Ոչ, պարտնայք, մենք ճիշդ մարդիկ չե՞նք:

Արդարամտութեան ու ճշմարտասիրութեան, միասնութեան ու ազգային շահի մասին գեղեցկակազմ ճառադասութիւններն ի գորու չեն, սքոզելու համար այս բիւրեղեայ ինքնաճանաչումը:

Մարտի 1-ի համապետական ողբերգութեան փաստապարտակ դիպաշարը շարքային քաղաքացու աչքի առջեւ է եւ, նրան ուղղուած անարգանք ու քամահրանք: Ոչ մէկը պակաս չէ Հայաստանի երեք նախագահներից, եւ հենց նրանք են, ում հարկ է իրենց այդ օրերի արարքների ու գործողութիւնների մասին վկայութիւն տալ հայ ժողովրդին: Ընտրութիւնից ընտրութիւն տէր հռչակուող «ժողովուրդը» պարտական չէ ոչ մէկին, ոչ էլ սերունդները, պատանդ, այլ իր ղեկավարների նախաձեռնում հաշուառնելով, մինչեւ Աստուած:

Ընտրական իշխանափոխութիւն, անուանուի սա «հերթական», թէ «արտահերթ», հայոց ողջ պատմութեան ընթացքում առաջին անգամ տեղի կ'ունենայ, երբ ազգովի, եւ յատկապէս քաղաքական պատասխանատուութեան բարեխիղճ կրողները, գիտակցենք ոչ միայն օտարի, թշնամու, ուրիշի, այլեւ սեփական մեղքն ու սխալականութիւնը, պատմական հայրենիք կորցնելու, հրաշքով փրկուած հանրապետական մեր արդի անկիւնն ապականելու, իր երկրում հայի ու հայաստանցու ազատութիւնն ու արժանապատուութիւնը, յոյսն ու հաւատը խորտա-

կելու համար: Պարկեշտ ախտորոշման այս ինքնահրամայականից էր մղուած, եւ ոչ թէ պատուիրաններ ի մրցավազքով պայմանաւորուած, Դաշնակցութեանը, Կոնգրեսին, Ժառանգութեանը (առաջին հերթին), ինչպէս նաեւ մնացեալ մեծերին ու փոքրերին ուղղուած, հայրենատիրական աննախընթաց հանգրուան համահեղինակելու իմ վաղուց առաջարկած քաղաքացիական մարդկային:

Հայաստանի եւ հայութեան ժողովրդավարական արժէքներն ու ազգային նպատակները պատկանում են, միասին եւ բնականաբար, հանրային առաջնահերթութիւնների միեւնոյն օրակարգին: Իր ազատութեան ու պատկանելութեան չափով, մարդ-քաղաքացին հաւաքական իղձերի, ազգային անվտանգութեան եւ պետական առաջատարութեան կորիզային արտացոլանքն է:

Մերժելով կամ միգուցէ կանխանշելով Նախիջեւանի ճակատագիրը, Արցախը դարձել է ինքնիշխան, իրաւական ու գրեթէ ամբողջական պետութիւն, որն արժանի է ճանաչման, եթէ դա իհարկէ իրեն տակաւին պէտք է: Իսկ Յեղասպանութեան ու Մեծ հայրենազրկման ամփոփմամբ, եթէ թուրքիայի ունէ պետգործիչ ՄԱԿ-ում կամ այլուրեք թէկուզ մէկ անգամ եւս փորձի կապել հայ-թուրքական յարաբերութիւնների պաշտօնականացումը որեւէ նախապայմանի հետ, լինի դա հակապատմական յանձնաժողովներ, Ղարսի պայմանագիր, ԼՂՀ կամ «occupied» տարածքներ, Հայաստանն իսկոյն եւ վերջապէս պէտք է ընդունի Անքարայի իրապէս ազնիւ մարտահրաւէրը, ա) վերականգնելով տեւապէս բացակայող սիմետրիան, բ) փակելով «առանց նախապայմանների» պատմափուլը եւ գ) պայմանաւորելով Հայաստանի մասով արցախեան հիմնալուծումը թուրքիայի կողմից 1920թ. Նոյեմբերին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրաւարար վճռի վերահաստատմամբ եւ այդ սահմաններից օկուպացիոն գորքերի դուրսբերմամբ:

Քաղաքացիական հպարտութիւնն է հայրենի հեռանկարի ակունքն ու էութիւնը: Դրա վերականգնումն իմ եւ մեր Աստուածատուր իրաւունքն է: Իսկ դրանից զատ, կեանքից, պետութիւնից, քաղաքականութիւնից եւ ոչ մէկից չունենմ այլ պահանջ կամ ակնկալիք: Բարով մնանք:

ՐԱՖՖԻ Կ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
«ԱՌԱՌՕՏ»

ՄԻՆՉԵԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԱԲԱՐՏ

Այսպէս կոչուած համաներումը իշխանութիւնները արեցին եօթերորդ դասարանցու ոճաբանութեամբ: Ծանօթ է չէ, ձեզ այն իրավիճակը, երբ պապան տնից դուրս գալիս եօթերորդ դասարանցուն յանձնարարում է դասերը սովորել, եւ խոստանում երեկոյեան ստուգել: Եւ ահա, եօթերորդ դասարանցին օրն անցկացնում է խաղերի, հեռուստացոյց նայելու գործերի մէջ, ու երբ լուր է հասնում, թէ պապան վերադառնում է, դպրոցականը անջատում է համակարգիչն ու հեռուստացոյցը, գրքերը փոռում սեղանի վրայ, մագերը խառնում՝ իբր նստած դաս է սովորում:

Այն, որ Սերժ Սարգսեանը Պրեսկոտ-Կոլումբիէ գոյգի հետ հանդիպումից ընդամենը կէս ժամ առաջ համաներման առաջարկը ուղարկեց Ազգային ժողով, հերքելու եկաւ Հասարակաց խորհրդի նախագահ Վազգէն Մանուկեանի այն պնդումը, թէ համաներումը սերժանտական իշխանութիւնը անում է ոչ թէ ճնշումներին տեղի տալով, այլ որովհետեւ իրեն մի ուրիշ ձեւի վստահ է գզուած:

Բա իհարկէ այս իշխանութիւնը իրեն վստահ կ'զգայ, որովհետեւ Սերժ Սարգսեանի կողմից իղիոտ որակուած Վազգէն Մանուկեանը, քոչարեանաարգեսանական իշխանութեան երբեմնի աստիկ ընդդիմադիր Շաւարշ Քոչարեանը, Արշակ Սաղոեանը-բանը արդէն սերժանտական իշխանութեան մէջ են, նրա յենարանի դերն են ստանձնել: Դէ էլ ո՞ր մի իշխանութիւնը այսպիսի տիտաններ ունենալով՝ իրեն վստահ չի զգայ. եթէ անգամ դա լինէր պոլի փետերի իշխանութիւն, իրեն վստահ էր զգալու Վազգէն-Շաւարշ-Արշակ եռեակի հզոր աջակցութեան շնորհիւ: Իրականութիւնն այն է,

ուղղութեամբ բաւարար քայլեր չանելու համար, իսկ միւս դէպքում, խրախուսում խօսքով եւ փողով: Այդ քաղաքականութիւնն ընդունուած է անուանել մտրակի եւ բլիթի քաղաքականութիւն: Բայց դա թերեւս հարցի միայն արտաքին, մակերեսային կողմն է: «Մտրակ եւ բլիթ» արտայայտութիւնը թերեւս դարձել է որոշակի կարծրատիպ, որը հնչում է եւ կարծես թէ ինքին աւելորդ է դարձնում հետագայ բացատրութիւնների անհրաժեշտութիւնը:

Մինչդեռ ցանկացած ինդիւրը պէտք է փորձել դիտարկել շատ կոնկրետ: ԱՄՆ իշխանութեան պահուածքն էլ այդ առումով բաւականաչափ կոնկրետ է: Երբ կայացուցեց «Հազարամեակների» ծրագրի դադարեցման մասին որոշումը, Հայաստանի վերնախաւը անմիջապէս սկսեց այդ ամէնի մէջ քաղաքական ենթատեքստ, թացը չորի հետ խառնելու իրողութիւն տեսնել: Սակայն ամերիկացիները հետագայ քայլերով յստակ ցոյց տուցին, որ իրականում թացը չորի հետ Հայաստանն է խառնում, ոչ թէ իրենք: Հայաստանն է, որ հարցերը ցանկանում է տեսնել ոչ թէ կոնկրետ հարթութեան, կոնկրետ խոստումների եւ պայմանաւորուածութիւնների, այլ ընդհանուր հայ-ամերիկեան բարեկամութեան շրջանակում:

Մինչդեռ բարեկամութիւնն ինքը կոնկրետ կատեգորիա է, յա-

Շաբ.ը էջ 4

սակայն, որ այս համաներումը իշխանութիւնը անում է մի ուրիշ ձեւի չուզելով, պարանը վիզն ընկնելով, եւ դա նկատելի է անգամ համաներում կոչուածից: Այդ տեքստից ուղղակի դուրս է պրծնում որքան հնարաւոր է շատ մարդ բանտերում պահելու սերժանտական մղումը: Եւ իրականում ոչ մի չափազանցութիւն չկայ այն պնդումներում, որ այսօր ազատութեան մէջ յայտնուող մեր քաղաքանտարկեալ ընկերները այդ ազատութիւնը ստանում են իրենց անկոտորում կամքի, իրենց հարազատների եւ Համաժողովրդական շարժման հետեւողական պայքարի արդիւնքում:

Հայ ազգային կոնգրեսի գործունէութեան ամենակարեւոր արդիւնքը այն է, որ այս ընթացքում իշխանութիւնը այդպէս էլ չկարողացաւ օրակարգից հանել Մարտի 1-ի, քաղաքանտարկեալների հարցը, ու չի կարողանալու, եւ քաղաքանտարկեալների բաւական հզոր թիւի՝ ազատութեան մէջ յայտնուելը նոր ուժ է տալու Համաժողովրդական շարժմանը, եւ քաղաքանտարկեալների որոշակի մասի յայտնուելը ազատութեան մէջ հենց Համաժողովրդական շարժման ձեռք բերումն է:

Ինքներդ դատէք, ինչո՞ւ պիտի ԵԽՆ-ն եւ մնացած կառույցները ճնշումներ բանեցնէին Հայաստանի իշխանութիւնների վրայ, եթէ քաղաքացիական պայքարը տեղի չունենար, եթէ Մարտի 1-ի հանրահաւաքը չչարունակուէր մինչեւ օրս: Այդ հանրահաւաքը շարունակուած է, այդ հանրահաւաքը շարունակուելու է մինչեւ յաղթական աւարտ:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ՄԵՏՐՕ ԶԷ

Երեւում է, Ամերիկայի Միացեալ Նահանգները խղճի խայթ զգաց Հայաստանին «Հազարամեակի մարտահրաւէրներ» կորպորացիայի ծրագրի 70 միլիոն դոլարից գրկելու համար, եւ դրանից յետոյ Պետդեպը որոշեց Հայաստանին մի քիչ գովել թրաֆիկինգի դէմ պայքարի հարցում առաջընթացի համար, իսկ ԱՄՆ կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ենթակոմիտէն էլ որոշեց Հայաստանին տրամադրել 48 միլիոն դոլարի, իսկ Ղարաբաղին էլ աննախադէպ՝ 10 միլիոն դոլարի օգնութիւն:

Շատ շուտով ասպարէզում կը յայտնուի անկասկած մի հմուտ եւ

խորթափանց քաղաքագէտ, որը կ'ասի, թէ Հայաստանի իշխանութիւնը կարողացաւ այնպիսի ճկուն դիւանագիտութիւն վարել, որ ամերիկացիները հասկացան «Հազարամեակի» հարցում իրենց սխալը եւ անմիջապէս փորձեցին ուղղել այն, սիրաշահելով Հայաստանի իշխանութեանը: Կատարուածն էլ կը ներկայացուի որպէս Հայաստանի հերթական դիւանագիտական յաղթանակ:

Եւ թերեւս ունէ մէկը չի փորձի իրապէս խորամուխ լինել երեւոյթի մէջ եւ փորձել հասկանալ, թէ ինչու են ամերիկացիները մի դէպքում պատժում Հայաստանին ժողովրդավարութեան

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՅ-Ն ՎԵՐԱՆԱՅՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Առաջիկայ օրերին մենք կը հրապարակենք Հայաստանի տնտեսութեանը վերաբերող մեր նոր վերանայուած գնահատականը, եւ հաշուի առնելով ներկայ իրողութիւնները, այն, անշուշտ, աւելի բացասական պատկեր կը ներկայացնի, քան այն, որն արտացոլուած էր մեր նախորդ կանխատեսման մէջ», - «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) Հայաստանի մշտական ներկայացուցիչ Նինկէ Օմեսը:



Արժույթի Միջազգային Հիմնադրամի Հայաստանի մշտական ներկայացուցիչ Նինկէ Օմես

Աւելի վաղ Արժույթի միջազգային հիմնադրամը կանխատեսել էր, որ Հայաստանի ՀՆԱ-ի անկումը տարուայ ընթացքում կը գերազանցի 5 տոկոսը: Մինչդեռ, արդէն Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայութիւնը հրապարակեց այս տարուայ առաջին 5 ամիսների մակրոտնտեսական ցուցանիշները, որոնց համաձայն՝ երկրի տնտեսութեան համախառն ներքին արդիւնքը նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ կրճատուել է 15.7 տոկոսով:

դրուարի կայունացնող վարկը, առաջիկայում մի շարք ծրագրերի շրջանակներում խոշորածաւալ վարկեր են սպասուում նաեւ Համաշխարհային բանկից:

«Իսկ հնարաւոր համարում էք, որ մինչ տարուայ վերջ Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշներն է՛լ աւելի կը վատթարանան», - այս հարցին Նինկէ Օմեսը պատասխանեց. - «Ոչ, չենք կարծում, որ տարուայ վերջում անկումը կը լինի աւելին, քան 15 տոկոսը»:

«Ազատութիւն» ռադիոկայանի ինդերանքին՝ մեկնաբանել արդէն երկնիչ թուերով չափուող տնտեսական անկումը, Նինկէ Օմեսը արձագանքեց. - «Հարկ չկայ կենտրոնանալ այդ ցուցանիշի վրայ, ինչը երբեմն կարող է եւ խաբուսիկ լինել. Հայաստանը շատ փոքր երկիր է՝ փոքր տնտեսութեամբ, եւ այստեղ տեղի ունենալիք՝ խոշոր դրամական ներդրում ենթադրող որեւէ գործարք կարող է կտրուկ փոխել պատկերն ու տնտեսական աճի բացասական ցուցանիշը փոխել դրականի»:

Հայաստանը արդէն իսկ ստացել է ուսական 500 միլիոն

ԸՆՏՐԱԿԵՂԾԱՐԱՐԸ ՄԷԿ ՕՐՈՎ ԷԼ ԶԱԶԱՏԱԶՐԿՈՒԵՑ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրաւասութեան դատարանը, արագացուած դատաքննութեան կարգով քննելով քրէական գործը, Յունիս 22-ին Օննիկ Յոյակի Ալեքսանեանին մեղաւոր է ճանաչել ՀՀ քրէական օրէնսգրքի 150-րդ յօդուածով նախատեսուած յանցանք կատարելու մէջ («Ընտրութիւնների կամ քուէարկութեան արդիւնքները կեղծելը»): Դատարանը նրան դատապարտեց ազատազրկման՝ 3 տարի ժամկէտով: Կիրառելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թուականի Յունիսի 19-ին ընդունուած համաներում յայտարարելու մասին որոշման առաջին կէտի առաջին

ենթակէտը, դատարանը Օննիկ Ալեքսանեանին ազատել է նշանակուած պատժից: Միաժամանակ դատարանը որոշում է կայացրել որպէս խափանման միջոց ընտրուած կալանքը վերացնելու եւ Օննիկ Ալեքսանեանին անյապող դատական նիստերի դահլիճից ազատ արձակելու մասին:

Յիշեցնենք, որ համաձայն մեղադրական եզրակացութեան Օննիկ Ալեքսանեանը մեղադրուած էր այն բանում, որ հանդիսանալով Երեւանի աւագանու ընտրութիւնների ընթացքում ձեւաւորուած թիւ 8/15 ընտրական տեղամասի յանձնաժողովի նախագահ, կեղծել էր յիշեալ տեղամասի ընտրութիւնների արդիւնքները:

ՌԱՄԿԱՎԱՐ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Յունիսի 19-ին Թէքէեան կենտրոնում տեղի է ունեցել Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցութեան (Արմենական-ՌԱԿ) հիմնադիր համագումարը: Օրակարգում ընդգրկուած էին նոր կուսակցութեան կանոնադրութեան, ծրագրի ընդունումը, հանրապետական վարչութեան եւ վերահսկիչ մարմինների ընտրութիւնը: Համագումարում Սերժ Սարգսեանի ողջոյնի խօսքը ընթերցել է նախագահի խորհրդական Մանուկ Թոփուզեանը: Ողջոյնի խօսքով հանդէս է եկել Ազգ օրաթերթի գլխաւոր խմբագիր Յակոբ Աւետիքեանը: Համագումարում որոշում է ընդունուել ընտրել Արմենական-ՌԱԿ կուսակցութեան վարչութիւն, կուսակցութեան ատենապետի պաշտօնակատար է ընտրուել Արմէն Մանուկէլեանը: Համագումարը որոշում է ընդունել այս տարուայ աշնանը հրաւիրել համահայկական՝ միաւորիչ համագումար, որի ժամանակ ինդիւր կը դրուի պիւլուքի Ռամկավար Ազատական կուսակցութեան կենտրոնի տեղափոխումը հայրենիք:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԵՒ ԽԱԶԱՏՈՒՐ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ ՀԱՐՑԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ



Մարտ 1-ի դէպքերէն յետոյ ընդլայնուող գտնուող Աժպատգամաւոր Խաչատուր Սուքիասեան (աջին) եւ «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինեան (ձախին)

«Tert.am»: Անցած տարուայ մարտի մէկէկէան դէպքերից յետոյ հետախուզման մէջ գտնուող Աժպատգամաւոր Խաչատուր Սուքիասեանի ու «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինեանի կողմից հայրենի իրաւապահներին ներկայանալու մասին ՀԱԿ ներկայացուցիչ Յովհաննէս Իգիթեանը տեղեկութիւնն չունի:

տարարել է ընդդիմադիր գործիչը: Նա կարծիք է յայտնել, որ համաներման առաջարկը խիստ անհատաւորուած է եւ կախուած որեւէ գործչի նկատմամբ «պերտունալ ատելութեան» չափից: Միեւնոյն ժամանակ, նա նշել է, թէ ինքը չգիտի կոնկրետ Խաչատուր Սուքիասեանի եւ Նիկոլ Փաշինեանի հանդէպ իշխանութիւնների զայրոյթն ինչ աստիճանի է:

«Ես չգիտեմ, ճիշդն ասած, կը ներկայանան, թէ չէ, ես ձեզ գլոբալ տեսակէտից եմ ասում, որ համաներումը չլուծեց քաղաքական հայեացքների համար հետապնդման հարցը, եւ այս մարդիկ որոնք հետախուզման մէջ են գտնուում, ընդլայնուած են գտնուում, նրանց պատժելու հարցը, ի վերջոյ լուծելու են այն իշխանաւորները, որոնք գրել են այդ փաստաթուղթը (նկատի ունի համաներման առաջարկը-հեղ),- Յունիս 22-ին «Դեֆակտո» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայ-

«Իրաւական տեսակէտից այս համաներման փաստաթուղթը չի լուծում այս մարդկանց միանշանակ ազատ արձակելու հարցը: Այսինքն, եթէ նրանք ներկայանան մինչեւ Յուլիսի 31-ը, եւ եթէ իշխանութիւնը որոշի, որ նրանք պէտք է ազատ արձակուեն, նրանք մի օրում դատաւարութիւնը կ'անեն, կը տան 4 տարի, եւ ազատ կ'արձակեն», - յայտարարել է Յովհաննէս Իգիթեանը ու աւելացրել, որ հակառակ դէպքում, եթէ իշխանութիւնը որոշի նրանց պատժել, դատաւարութիւնը կը շարունակուի:

ԱՄՏՈՎԹԱՐԻՑ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ



Արամ Միսկարեանը եւ Գեղամ Ղանդիլեան

Յունիս 22-ի երեկոյան աւտովթարից մահացել են «Շանթ» հեռուստաընկերութեան «Որոգայթ» հեռուստասերիալի դերասաններ Արամ Միսկարեանը (Գարիկ) եւ Գեղամ Ղանդիլեանը (Գոթոր):

մասից ու շրջուել: Ըստ Փրկարար ծառայութեան հաղորդագրութեան՝ փրկարարները Գոհար Տէր-Աղամեանին պատկանող աւտոմեքենայից դուրս են բերել ուղեւորներ՝ 1973 թ. ծնուած Արամ Միսկարեանի եւ 1974 թ. ծնուած Գեղամ Ղանդիլեանի դիակները, ինչպէս նաեւ տուժած վարորդին՝ 1983 թ. ծնուած Էդգար Տէր-Աղամեանին, որը տարբեր աստիճանների մարմնական վնասուածքներով տեղափոխուել է էջմիածնի հիւանդանոց:

Ինչպէս «Ա1+»-ին յայտնեցին Ոստիկանութեան լրատուական բաժնից՝ դեռեւս չպարզուած հանգամանքներում Երկուշաբթի, ժամը 23.50-ին Արմաւիր-էջմիածին ճանապարհին՝ աւտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի

ԼՈՒՐԵՐ

ԹԵՐԻ ԴԵԻԻՍ. «ՄԱՐՏԻ 1»-Ի ԷՋՈ ՓՎԿՈՒԱԾ ՉԷ»

«ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Եւրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դեյխի կարծիքով՝ Հայաստանում համաներուց յայտարարելուց յետոյ ձեռքբերված արձակուրդները ազատ արձակմամբ «Մարտի 1»-ի էջը չի փակուել:



Եւրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դեյխ

Դեյխը հրատարակել էր Եւրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտօնում իր վերջին ասուլիսը. նրա լիազորութիւնների ժամկէտը աւարտուում է:

Ասուլիսի նախաբանում նա իր մտահոգութիւններն արտայայտեց Եւրոպայի խորհրդի անդամ երկրներում բռնութիւնների աճի կապակցութեամբ:

Նա խօսեց նաեւ կովկասեան տարածաշրջանում եւ մասնաւորապէս Հայաստանում անցած տարի տեղի ունեցած դէպքերի մասին: Ըստ Թերի Դեյխի՝ բռնութիւնները վկայում են քաղաքական մշակույթի պակասի մասին:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ արդեօ՞ք համաներուց յայտարարելուց յետոյ ձեռքբերված արձակուրդները ազատ արձակմամբ փակուել «Մարտի 1»-ի էջը, Թերի Դեյխը ժխտական պատասխան տուեց. - «Ո՛չ: Դեռ առկախ շատ կարեւոր հարցեր կան այն մասին, թէ ինչ կատարուեց մէկ տարի առաջ: Եւ ես դեռ շատ մտահոգ»:

ուած եմ այն իրողութեամբ, որ ոեւէ մէկը չի ձեռքբերվել եւ չի պատժուել մահուան դէպքերի համար: Ասում են, թէ մէկ ոստիկան է սպանուել, բայց սպանուել են նաեւ շատ այլ մարդիկ, ովքեր ոստիկաններ չէին եւ սպանուել են մէկ տարի առաջ: Դա սպանութիւն է»:

Նրա կարծիքով՝ «հաւանք է, որ ոստիկանութիւնը Հայաստանում չի կարողացել գտնել նրանց, ովքեր պատասխանատու են այս սպանութիւնների համար, որպէսզի դատական գործ յարուցեն»:

«Ես ասացի՝ մտահոգուած եմ, որ մարդիկ ձեռքբերվել են, բայց աւելի մտահոգուած եմ, որ մարդիկ են սպանուել», - ընդգծեց Թերի Դեյխը:

ՍԻՐԻԱՆ ՊԱՏՐԱՍ Է ԱԶԱԿՑԵԼ ՅԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆԸ



Սուրիայի Հայաստանի դեկավարները Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին

«ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: «Սիրիայում գոհունակութեամբ ընդունեցին այն քայլերը, որոնք ուղղուած են հայ-թուրքական շարքերութիւնների նորմալացմանը», - Սերժ Սարգսեանի հետ Յունիս 17-ին Երեւանում համատեղ ասուլիսում յայտարարեց Բաշար ալ Ասադը: - «Ես Հայաստանի նախագահին փոխանցեցի մենք պատրաստ ենք օգնելու, որպէսզի այդ շարքերութիւններում առաջընթաց լինի: Եւ դա, ելնելով այն հանգամանքից, որ սերտ շարքերութիւններ գոյութիւն ունեն մի կողմից Սիրիայի եւ Հայաստանի, միւս կողմից՝ Սիրիայի եւ Թուրքիայի միջեւ»:

եւ Ազրբեյջան, եւ նախքան գնալ կ'ուզենայի իմանալ մանրամասները եւ Հայաստանի նախագահի տեսակէտն այս հարցում», - շեշտեց Բաշար Ալ-Ասադը:

Սիրիայի նախագահը խօսեց նաեւ տեղի հայ համայնքի մասին, նշելով, թէ սիրիահայութիւնը գաղութ չէ, այլ «Սիրիայի քաղաքացիներ են, որոնք ինտեգրուել են մեր կեանքին, մշակույթին, սակայն միաժամանակ պահել են ազգային նկարագիրն ու մշակույթը»:

Ըստ Հայաստանի նախագահի, տնտեսական շարքերութիւնների խորացման գործում խոչընդոտ է ցամաքային կայի բացակայութիւնը, եւ կողմերը կ'աշխատեն, որպէսզի առաջիկայում գործարարները այդ հնարաւորութիւնը ունենան:

«Մենք պարոն նախագահի հետ պայմանաւորուեցինք, որ յաջորդ հանդիպման ժամանակ միջկառավարական յանձնաժողովների նախագահները պէտք է ասեն, թէ այդ ժամանակաշրջանում ինչ պայմանագրեր ենք ստորագրելու, եւ ինչքանով է աւելացել մեր ապրանքաշրջանառութիւնը», - յաւելեց Սերժ Սարգսեանը:

Սիրիայի նախագահի պաշտօնական այցի շրջանակներում ստորագրուեց երկու միջկառավարական համաձայնագիր:

«ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ Է ՍԿՍՈՒԵԼՈՒ»

Մարտնակուած էջ 1-էն

Դատական այս խեղդատակութիւններու հետեւանքով ազատ արձակուեցան նաեւ Երեւանի վերջին ընտրութիւններու առթիւ ձերբակալուած իշխանական գեղծարարները, ծիծաղի առարկայ դարձնելով Հայաստանի ամբողջ իրաւական համակարգը:

Քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը պայմանաւորուած էր նաեւ, նոյն օրը Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին ներս (ԵՆԽՎ) Հայաստանի իրավիճակի շուրջ կատարուող քննարկումներով:

ԵՆԽՎ Հսկիչ Յանձնաժողովը Երկուշաբթի երեկոյեան եկաւ յայտարարելու թէ, յառաջընթաց կայ, սակայն Հայաստան պիտի շարունակէ մնալ հսկողութեան տակ, մինչեւ որ յստակ դառնայ, թէ ինչպէս կը կիրառուի համաներուցը:

Երեքշաբթի, Յունիս 23-ին ազատ արձակուեցան նաեւ խումբ մը այլ բանտարկեալներ, որոնց շարքին Հայաստանի գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ ԳՏանգիրեան:

«Ես տկուտութիւն, կամք, արիւթիւն եմ ցանկանում ճաղաւանդակների հետեւում մնացած մեր բոլոր ընկերներին ու խոստանում եմ, որ մենք իրենց արագ ազատ ենք արձակելու», - դուրս գալով քրէակատարողական հիմնարկէն՝ հաւաքուած լրագրողները:

րուն յայտարարեց Ջհանգիրեան:

Գլխավոր դատախազի նախկին տեղակալը ներկայացնելով համաներման մասին իր գնահատականը ըսաւ. - «Ժողովրդական շարժման ճնշումների, եւրոպական կառույցների յորդորների ազդեցութեան տակ ընդունուեց կիսաջղի փաստաթուղթ», - ու յայտնեց որ, ինքզինք կը նկատէ Հայ Ազգային Գոնկրէսի շարքային գիտնուոր ու պատրաստ է հետեւելու անոր յառաջիկայ բոլոր քայլերուն:

Միւս կողմէ Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան Երեքշաբթի օր յայտարարեց, որ ընդդիմադրութիւնը կը պատրաստուի Յունիս 2-ին կազմակերպելու արտահերթ հանրահաւաք, ազատ արձակուած գործիչներու մասնակցութեամբ:

Յունիս 12-ի ընդդիմադիր հանրահաւաքի ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարած էր, որ Հայ Ազգային Գոնկրէսի յաջորդ հանրահաւաքը պիտի կայանայ Սեպտեմբեր 18-ին:

«Մենք ընդամէնը ասել ենք, այն հանրահաւաքի օրը, որը անպայման անցկացնելու ենք՝ Սեպտեմբերի 18-ին, դա մնում է ուժի մէջ: Բայց մեր քաղաքատարկեալների ազատման առիթով մենք ցանկանում ենք անցկացնել հանրահաւաք, որին կը մասնակցեն մեր քաղաքատարկեալները», - այս կապակցութեամբ ըսաւ Լեւոն Զուրաբեան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄՆԱԸ ԵՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Մարտնակուած էջ 2-էն

Սակայն, նկատի առնելով արդարադատութեան, ոստիկանութեան եւ ընտրական համակարգէն ներս անհրաժեշտ փոփոխութիւնները, անհրաժեշտ է Հայաստանը պահել հսկողութեան ռեժիմի տակ:

Բաւականին խիստ էր համագեկուցող ձոն Պերոսկոտի ելույթը, որ յայտարարեց՝ թէ չպէտք է մոռնալ, որ մարդիկ գոհուած են եւ ոեւէ մէկը պատասխանատուութիւն չէ կրած եղածի համար:

Պերոսկոտ արտասանք յայտնեց փաստահաւաք խումբի լուծարման վերաբերեալ եւ տեղեկացուց, որ իրենք Սեպտեմբերին կ'ականակեն լսել անկախ հետաքննութեան, խորհրդարանական յանձնաժողովի գեկուցը: Ան քննադատեց ՀՀ ոստիկանական համակարգը, որ մարդկանց նկատմամբ գէնք գործածած է: Ան ուղղակի ըսաւ, որ պէտք է պատասխան տրուի, թէ ինչու գէնք գործածուած է ժողովուրդի դէմ եւ այդ բացատրութիւնը պէտք է տայ իշխանութիւն:

ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ՄԵՏՐՕ ՉԷ

Մարտնակուած էջ 2-էն

մենայն դէպս արեւմտեան պատկերացումներից ելնելով: Երբ բարեկամութիւնը վեր է ածուում պատմական իրողութեան կամ մշակութային արժէքի, ապա այն դառնում է փաստացի բեռ, ինչպէս հայ-ուսական բարեկամութեան

պարագայում, որն այսօր ոչ մի կոնկրետ բան չունի եւ հիմնուած է գրեթէ բացառապէս պայմանականութիւնների վրայ: Սովոր լինելով բարեկամութիւն ասուածը դիտարկել հենց այդ պատմաբարոյական հարթութեան վրայ, հայերը թերեւս ունակ չեն հասկանալ բարեկամութեան արեւմտեան չափո-

րոշիչները, որոնց հիմքում կոնկրետ խօսքն ու գործն են, ոչ թէ պատմական ժառանգութիւնն ու դարաւոր յարաբերութիւնները: Ըստ երեւոյթին, ամերիկացիները Հայաստանին այժմ ոչ այն-

քան ժողովրդավարութիւն, որքան բարեկամութիւն են սովորեցնում՝ հայ-ժողովրդավարական բարեկամութիւնն ամբողջութեամբ համար: ՅԱԿՈՒ ԲԱՆԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ, ՍԻՈՆԻՍՏՆԵՐԻ ԵՒ ՄԱՍՈՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԵՒ ՔԻՉ ՅԱՅՏՆԻ ԿԱՊԵՐՈ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պատմութիւնից յայտնի է, որ երիտթուրքերի, այսինքն՝ «Իթթիհադ վէ թերաքքը» («Միութիւն եւ առաջադիմութիւն») կուսակցութեան (յայտնի է նաեւ որպէս կոմիտէ) անդամները «Ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն» բառերն ու իտալական ֆրանկմասոնները նշանախօսքերը համընկնում են:

Երիտթուրքերի, ինչպէս նաեւ իտալական ֆրանկմասոնութեան տարբերակող գոյները կարմիրն ու սպիտակն են: Մուսթաֆա Քեմալի հիմնած թուրքիայի Հանրապետութեան պետական դրօշի գոյներն էլ կարմիրն ու սպիտակն են. կարմիր ուղղանկեան մէջ սպիտակով պատկերւում են աստղն ու մահիկը: Ի դէպ, չիշեալ նշանախօսքերը նաեւ ֆրանսական մասոնութեան նշանախօսքերն են, որոնք Ֆրանսական մեծ յեղափոխութեան յաղթանակից յետոյ վերածուել են Ֆրանսայի Հանրապետութեան պաշտօնական նշանախօսքի: Դրանք այսօր էլ զարդարում են այդ երկրի խորհրդանշանները:

Մեծն Բրիտանիայի արտաքին գործերի նախարար սրբ Չ. Հարդինգին Ստամպուլում Մեծ Բրիտանիայի դեսպան սրբ Դ. Լոուիլըրի ուղարկած 1910թ. մայիսի 29-ով թուագրուած նաեւ մակ-գեկուցագրում (Մեծն Բրիտանիայի Ֆորէն օֆիսի դիւան, Լոուիլըրի թղթեր, թիւ F.O.800/193A, փաստաթուղթն առաջին անգամ լոյս է տեսել Լոնտոնում հրատարակուող «Միջինարեւելեան ուսումնասիրութիւններ» ամսագրի («Journal of Middle Eastern Studies») 1971թ. թիւ 1-ում՝ իբրև յաւելում նոյն համարում հրատարակուած է. Կեղուրիէի «Երիտթուրքերը, մասոնները եւ հրեաները» յօդուածի) նշուած է, որ չնայած նշանախօսքերի չիշեալ համընկնմանը, միանգամայն պարզ է, որ սալոնիկեան (երիտթուրքական) շարժման աղբիւրը հրեաներն են: «Մի քանի տարի առաջ սալոնիկցի հրեայ մասոն էմմանուէլ Կարասոն, որը հիմա Օսմանեան մէճլիսում (Օսմանեան կայսրութեան խորհրդարանի պաշտօնական անունը. - ծ.հ.) քաղաքի պատգամաւորն է, Սալոնիկում հիմնեց իտալական ֆրանկմասոնութեան հետ կապուած «Մակեդոնիա Ռիզորտա» օթեակը, - նշուած է չիշեալ գեկուցագրում:

Միանգամայն ակնյայտ էր, որ այս մարդը երիտթուրքերի ռազմական ու քաղաքական գործիչներին մասոնութեանը հաղորդակից դարձնելու աշխատանք էր տանում, որպէսզի թուրքիայի նոր ղեկավարութեան շրջանում տարածուի Արեւելքի հրեական գաղտնի գործունէութեան ազդեցութիւնը: Այնքան

մեծ են եղել հրեա-մասոնների դերն ու ազդեցութիւնը երիտթուրքական «Իթթիհադ վէ թերաքքը» կազմակերպութեան ծննդի ու գործունէութեան մէջ, որ Կ. Պոլսի բրիտանական դեսպանութեան գլխաւոր թարգման Հ. Ֆիտցմորիսը այն անուանել է «Միութիւն եւ առաջադիմութիւն» հրէական կոմիտէի (Ֆորէն օֆիսի դիւան, Լոուիլըրի թղթեր, փաստաթուղթ թիւ F.O.800/193 B): Սրբ Դ. Լոուիլըրն իր չիշեալ նամակ-գեկուցագրում հաւաստում է, որ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կազմակերպութեան ղեկավարները շատերը ֆրանկմասոն են: Նշել է նաեւ, որ էմմանուէլ Կարասոն մեծ դեր է ունեցել, մասնաւորապէս՝ հասել է նրան, որ իր ձեռքն է վերցրել այդ կազմակերպութեան Պալքանեան կոմիտէն:

«Տեղացի եւ արտասահմանցի հրէաներն սկսեցին նոր վարչակարգին արդիւնաւէտ օգնութիւն ցոյց տալ, եւ նկատի ունենալով երիտթուրքերի յեղափոխութիւնից եւ Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի տապալումից յետոյ ձեւաւորուած վարչակարգը՝ գրել է Ստամպուլում Մեծ Բրիտանիայի դեսպանը: - Դա շարունակուեց այնքան ժամանակ, քանի դեռ, ինչպէս մի թուրք բացատրեց, ժողովուրդը չսկսեց խօսել, թէ ամէն մի հրեայի կարելի է գաղտնի կոմիտէի լրտես համարել, եւ թէ ամբողջ շարժումը ոչ այնքան թրքական, որքան հրէական յեղափոխութիւն էր: Իտալիայի կառավարութիւնը որպէս գլխաւոր հիւպատոս Սալոնիկ ուղարկեց հրեայ մասոն Պրիմօ Լեւիին, որը, մինչ այդ, արտաքին ներկայացուցչութեան փորձ չունէր: Ամերիկայի դեսպան նշանակուեց Օսկար Շտրաուսը, որը ձէջքով Շիֆֆի հետ ամերիկացի հրեաների վրայ մեծ ներգործութիւն ունեցաւ հրեաների Միջազգայն արտագաղթի հարցում: Դա սիոնականութեան զարգացած հոսանքներից էր, որը հանդէս էր գալիս ուրիշ «հայրենիքի» ծրագրի դէմ»: 1909թ. վերջերին, դեսպանի տեղեկացմամբ, «Սալոնիկի պատգամաւոր, յաջողակ եւ խելօք դեռնմե-հրեայ ու մասոն Ջավիդ բեյը ֆինանսների նախարար նշանակուեց»: Դեռնմէ են կոչւում արտաքուստ, ձեւականորէն կրօնափոխ (իսլամացած) այն բոլոր հրէաները, որոնք պատկանում են հրէայ «մարգարէ» Սեպթայի կրօնական ուղղութեանը (սեպթայիզմ): Պատմութիւնից յայտնի է, որ Ջավիդ բեյը երիտթուրքերի պարագլուխներից էր, գործուն մասնակցութիւն է ունեցել Հայոց մեծ եղեռնի ծրագրմանը եւ իրականացմանը, իսկ յետագայում յատկապէս ֆինանսապէս աջակցել Մուստաֆա Քեմալի շարժմանը:

Երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ երկրում երկամեայ ժամկէտով ռազմական դրութիւն է յայտարարուել: Սրբ Դ. Լոուիլըրի հաւաստմամբ, «Ռազմական դատարանի շատ սպաներ ֆրանկմասոն էին»: Ցանկացած թերթի տպագրութիւնն արգելելու եւ խմբագրին կամ սեփականատիրոջը ռազմական դատարան կանչելու իրաւասութիւն ունեցող մամուլի գրասենեակի ղեկավարի պաշտօնում, դարձեալ ըստ նոյն նամակ-գեկուցագրի, առաջ քաշուեց եւս մէկ դեռնմե-հրեայ մասոն Սալոնիկից: Յիշեալ փաստաթղթում սրբ Դ. Լոուիլըրը նաեւ տեղեկացրել է. «Կիսապաշտօնական օսմանեան հեռագրային ծառայութիւնը, որն արտապայտում էր կոմիտէի կարծիքը օսմանների ներքին եւ արտաքին գործերի վերաբերեալ, գործողութեան մէջ դրուեց պողոտայի մի հրեայի ղեկավարութեամբ: Միեւնոյն ժամանակ, ոստիկանութեան հին նախարարութեան փոխարէն ստեղծուեց Հասարակական անվտանգութեան կազմակերպութիւնը՝ սալոնիկցի մի հրէայի ղեկավարութեամբ, որը միաժամանակ հսկում էր թէ ոստիկանութիւնը, եւ թէ ժանդարմերիային»: Առանձնապէս կարեւոր է Մեծն Բրիտանիայի դեսպանի հաղորդած այն տեղեկութիւնը նաեւ, որ բանակում «Իթթիհադ վէ թերաքքը» կոմիտէի ազդեցութիւնը տարածելու համար սպաներին ընդունում էին մասոնութեան մէջ՝ նրանց «Ռենգէ» օթեակի անդամ դարձնելով:

«Կոմիտէի» պատգամաւորների եւ ծերակուտականների մեծամասնութիւնը մասոն է դարձել եւ ընդունուել «Սահմանադրութիւն» («Հա Կոնստիտուսիոն») կամ «Կանունի Կասսի» օթեակ: Առաջիններից էին ներքին գործերի նախարար Թալէաթ բեյը եւ ֆինանսների նախարար Ջավիդ բեյը:

Ընդդիմութեան պատգամաւորներից մի քանիսը, յատկապէս արաբ-

ները, տեսնելով, որ մի կողմ են մտնում քաղաքական գաղտնիքներից եւ վարչական ղեկից, նոյնպէս սկսեցին միանալ օթեակներին կամ նորերը ստեղծել, ինչպէս, օրինակ, «Օսմանեան եղբայրութիւն» («Ուխուվեթի օսմանիէ») եւ «Ազատութեան բարեկամներ» («Մուհիբանի հիւրրիեթ»):

Որպէս վերոյիշեալ օթեակների լրացում՝ 1909-1910թթ. ստեղծուեցին հետեւեալ օթեակները. «Արեւելքի հաւասարմութիւն», «Անկեղծ բարեկամներ», «Միութիւն եւ առաջադիմութիւն», «Բիզանցիո Ռիզորտա», «Լա Վերիտէ» (Ֆրանսերէն՝ ճշմարտութիւն. - ծ.հ.), «Լա Պատրի» (Ֆրանսերէն՝ հայրենիք. - ծ.հ.), «Լա Ռենեսանս» (Ֆրանսերէն՝ վերածնունդ. - ծ.հ.) ու Եգիպտոսի ընդլայտական քաղաքական հետաքննիչները համար բաւական յայտնի «Լուսաբացը», որը «Մակեդոնիա Ռիզորտայի» բաժին է: Մասնական այս ամբողջ ցանցը, սալոնիկեանի եւ մակեդոնականի նման, հրէաների ձեռքում է, որոնք կամ անմիջականորէն են ղեկավարում բոլոր օթեակները, կամ ուղղորդում են դրանց գործունէութիւնը»:

Անդրադառնալով Թալէաթ բեյին, որը յետագայում ստացել է Մեհմեդ Թալէաթ փաշա անունը, նշենք, որ նա երկրի երիտթուրք գլխաւոր ղեկավարներից է եղել, ունեցել է հրէական եւ գնչուական ծագում: Հեռագրակապի՝ ամիսը 3 լիւրա աշխատավարձով այս ծառայողը յետագայում դարձել է Օսմանեան կայսրութեան ներքին գործերի նախարար, 1917-1918թթ-ին՝ Մեծ վեզիր (վարչապետ): Հայոց մեծ եղեռնի հիմնական ծրագրաւորողներից եւ իրականացնողներից այս մէկը յայտնի է նաեւ որպէս Սալոնիկի «Վերթիսա» օթեակի անդամ («Դեռնմէ հրէաները, նրանց ծագումը եւ դերը հայկական յեղասպանութեան մէջ», «Զարթոնք» օրաթերթ, 16.04.1986թ., թիւ 155):

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայրոփորքից բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոդոյի և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթորի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



ՅՈՒՆԻՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒԲՐՈՒՄՍ

ՍԱՄՈՒԷԼ ԻԼՄՆՃԵԱՆԻ

Մշակութային, Թատերական եւ Ազգային-Հասարակական Գործունէութեան Վարսունիինգ Կենտրոն

Կազմակերպութեամբ՝
Հ.Բ.Բ. Միտքեան Արտաւագ Թատերախումբին
Հովանաւորութեամբ՝
Հ.Բ.Բ. Միտքեան Հարասային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի

Տեղի կ'ունենայ
ՇԱՐԱԹ, 27 ՅՈՒՆԻՍ, 2009
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:30 ԻՆ

Հ.Բ.Մ. ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԳՐՈՒԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՉ
2495 EAST MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

ՀԻՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՏԻՆ

Կը խնդրուի Չեր ներկայութիւնը նախօրոք տեղեկացնել
մինչեւ 22 Յունիս, 2009-ին, հեռաձայնով
Հ.Բ.Բ. Միտքեան Գրասենեակ - (626) 794-7942

ՏԵՍԱԿԵՏ

«ՄԻԱՅՆ ՄԵՆՔ, ՈՒՐԻՇ ՈՉ ՈՔ»

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայ թեմերում, յատկապէս, Իրանում, Դաշնակցութիւն կուսակցութիւնն իրեն համարում է միահեծան տիրակալ եւ, ընդհանրապէս, կուլ տալ չի կարողանում հայկական միւս կազմակերպութիւններին, անգամ անձանց ներկայութիւնն ու դերակատարութիւնը:

Իրանի նախագահական ընտրութիւնները առիթ տուցին, մէկ անգամ եւս, փաստուելու այս պարագան:

ՀՅԴ ոչ պաշտօնական պաշտօնաթերթ «Ալիք»-ը իր Մայիսի 30-ի համարի առաջին էջի վրայ «Անձնական նախաձեռնութիւն» համայնքի անունից խորագրի ներքոյ տեղեկացնելով, որ որոշ հայ մարդիկ ԻԻՀ 10-րդ նախագահական ընտրութիւններում աշխուժութիւն են բանեցնում՝ պաշտպանելով այս կամ այն թեկնածուին, գրում է՝ թէ որոշները «կենտրոնացել են միմիայն մէկ թեկնածուի՝ ճարտարապետ Միրհոսէյն Մուսաւիի վրայ եւ վերջինիս ու նախկին նախագահ Խաթամիի համատեղ հանդիպմանը մասնակցելու կոչ են ուղղել հայ համայնքի անդամներին ու «հայրենակիցներին»՝ «լսելի դարձնելու մեր համայնքի պահանջներն ու դժուարութիւնները»:

Չակերտաւորումները «Ալիք»-ինն են: Այսինքն ուզում է ասել, որ բոլոր այն հայ մարդիկ, որոնք նման ձեռնարկներ են նախաձեռնում, նախ եւ առաջ, մեր հայրենակիցները չեն, մի խօսքով հայ չեն: Երկրորդ՝ կուսակցութիւնից բացի, որ այս դէպքում, ինչպէս շատ այլ դէպքերում, թաքնուած է ԹՀԹ առաջնորդարանի դիւանի անուան ետեւում, ոչ ոք իրաւունք չունի խօսել համայնքի պահանջների ու դժուարութիւնների մասին: Նոյն այս միտքը ուղղակիորէն եւ առանց իսկ ամաչելու կրկնում է «Ալիք»-ը՝ «մեր («Ալիք»-ի) առաջին էջում հրապարակած «Դիւան ազգային առաջնորդարանի» յայտարարութիւնը, որը պարունակում է բոլոր 4 թեկնածուներին ներկայացնել համայնքի կողմից առաջարկ-պահանջները, ինչ խօսք՝ աւելիով իրական ու իրաւական հիմք ունի՝ որպէս համայնք եւ որպէս երկրի հասարակական ուրոյն եւ օրինաւոր միաւոր հանդէս գալու եւ պահանջ ներկայացնելու:

Այլապէս՝ միւս նախաձեռնութիւնները անձնական բնոյթ են կրում եւ իրականօրէն, իրաւականօրէն ու բարոյապէս իրաւասու չեն տեսլ համայնքի անունից հրապարակ իջնել, յատկապէս եթէ դոյզն իսկ համադրելու ու համակարգելու քայլերի չեն ձեռնարկել համայնքի իրաւատէ-

րի ու պետութեան կողմից ճանաչուող ազգային իշխանութեան հետ (գոր օրինակ, վաղը, Կիրակի, Մայիսի 31-ին «անձնական» նախաձեռնողները կոչ են ուղղել «Էթթելաթ»)

օրաթերթի կենտրոնատեղիում Մուսաւի-Խաթամիի հետ հանդիպումը, մինչդեռ ազգային իշխանութիւնը կազմակերպել է հանդիպում «Արարատ» մարզաւանի «Շահբազեան» սրահում»:

Կուսակցական թերթը եզրակացնում է. «Մի խօսքով՝ անհատական, անձնական ու մասնաւոր նախաձեռնութիւնն երբ եթէ կրում են քաղաքացիական իրաւունքներ չհետապնդման նպատակ, դրանք ողջունելի ու խրախուսելի են, իսկ եթէ անհասցէ, անանուն կոչ-հրաւերներով են ու ի մասնաւորի՝ համայնքի անունից ու համայնքի հաշիւն են հրապարակուում ու «կազմակերպուում», դրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ միեւնոյն համայնքի ընտրութեան արդիւնքում ձեւաւորած ազգային իշխանութեանը շրջանցելն ու իրաւական հեղինակութիւնը հարցականի տակ տանելը: Իսկ նման կեցւածքներ ընդունողները՝ մեղմ ասած՝ սանձարձակութեան կամ «ազգափրկութեան» ամբիցիաների տհաս դրսեւորումների արդիւնք են»:

«Ալիք»-ը մոռանում է, որ հենց նոյն գրութեան մէջ նշել է, որ անձնական ձեռնարկ կազմակերպողները իրենց յայտարարութեան մէջ հեռախօսահամարներ են ներկայացրել յաւելեալ տեղեկութիւն պահանջողների համար ու նաեւ, որ յայտարարութիւնները կրում են «Ընտրական շտաբ» ստորագրութիւնը, որ ընդհանրապէս, ընդունուած տարբերակ է ընտրութիւնների ժամանակ եւ ոչ ոք հանդէս չի եկել համայնքի անունից: Այստեղ, աւելի շուտ, խնդիրը նրանում է, որ իրենք ուշացած են տեղ հասել եւ, ինքնաբերաբար, բեմը յայտնուել է այլոց ձեռքում, ինչն, ընդհանրապէս, դուր չի գալիս մենատէր կուսակցականներին:

Մեր խօսքը փակելուց առաջ յստակացնենք, որ մենք եւս համաձայն ենք այն մտքի հետ, որ համայնքի անունից իրաւունք ունի հանդէս գալ միայն նրա իրաւատէրը, սակայն յայտեղ հարցը նրանում է, որ իրաւատէրը կամ այսպէս կոչուած ազգային իշխանութիւնը իր դերում չէ եւ փաստօրէն անձնատուր է եղել Դաշնակցութեան կուսակցութեան: Յենտեղով հենց այս փաստի վրայ էլ կարելի է ասել, որ ազգային իշխանութեան ոչ ժողովրդավարական մօտեցումների արդիւնքում է, որ նման խնդիրներ են ծագում: Պատմութեան համար նաեւ արձանագրենք, որ բացի Դաշնակ կուսակ-

ՏԵՍԱԿԵՏ, ՇԱՏ ՏԵՍԱԿԵՏ ՏԱՐԵՂԱՐՁԸ ՍԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Հինգ տարի առաջ, Մարտ 16, 2004ին, առնուեցաւ Հարազուշակ որոշում մը՝ Յունիս 2005ին Մելգոնեան կրթական Հաստատութիւնը փակելու:

Արդարացումը...
ՀԲԸ Միութեան Կեդրոնական վարչութեան կողմէ տրուած բացատրութիւնը այն էր, որ Մելգոնեանը չէր կատարել իր առաքելութիւնը, հետեւաբար, չէր արդարացներ իր գոյութիւնը: Այս արարքով երկու հիմնական նպատակներ կը հետապնդուին. առաջին՝ ՄԿՀ փոխարինել՝ առաքելութիւնը կատարելու ատակ ուրիշ կրթական հաստատութիւններով եւ երկրորդ՝ Մելգոնեան կալուածը ծախել, կեդրոնական վարչութեան տրամադրութեան տակ գտնուած հարկուրաւոր միլիոն տոլարներու գումարը աւելի ճոխացնելու համար:

Արդ, փորձենք գիտնալ թէ վերոյիշեալ երկու նպատակներուն մէջ որքան յաջողեցաւ այս որոշումը առնող ՀԲԸՄ ներկայ ղեկավարութիւնը:

Որքան որ գիտենք առաջին նպատակին համար կատարուեցան երկու նախաձեռնութիւններ՝ մին լոս Անձելոսի մէջ, միւսը՝ նման հաստատութիւն մըն ալ Հայաստանի մէջ հիմնելու, բայց չփորձեցին անհրաժեշտ սրբազրութիւնները կատարելով ետ իր առաքելութեան վրայ դնել հաստատութիւնը, եթէ ընդունինք որ ճիշդ էր իրենց արտաճանաչումը:

Ոչ միայն մեկգոնեանցիները, այլ համայն հայութիւնը կ'ուզէ գիտնալ թէ որքանով իրականացան այդ նպատակները եւ ի՞նչ արդիւնք տուին: Իսկ երկրորդ նպատակին ձախողութիւնը հանրայայտ է, նկատելով որ Մելգոնեանը ծախելու արգելք հանդիսացաւ կիպրական կառավարութիւնը, այն արդարացումով որ ՄԿՀ համակիրական ազգային հարստութիւն է: Եւ այժմ հաստատութեան շէնքերը, անշուշտ բարեսիրաբար (չըսյու համար իբր կաշառք), ՀԲԸ Միութեան կողմէ տրամադրուած են Կիպրոսի կրթութեան եւ մշակոյթի նախարարութեան, որ գայն կ'օգտագործէ իբրեւ յունական դպրոց, մինչ մեր երջանկայիշատակ բարերարները գայն հիմներ էին Յեղասպանութենէն ազատած հայ որբերու իբրեւ կրթարանապատանատուն:

ցութիւնից եւ կուսակցական վերանախարհից, ոչ մի կառույց կամ անհատ նախաւորութիւն չունի եւ չի կարող համայնքի հաշուին որեւէ ձեռնարկի համար ծախսել, ուրեմն մի փորձէք մարդկանց աչքերին թող փչել: Իսկ վերջում արժի աւելացնել նաեւ, որ անձնական նախաձեռնութեանը աւել-

Այս գոյգ ձախողութիւններէն յետոյ կայ նաեւ կտակին խախտումը, որ թէ օրինական եւ թէ համազգային շահերու տեսակէտով անընդունելի ու դատապարտելի է: Տակաւին կան նաեւ անչափելի խորունկ վնասներ, որոնք վարկաբեկեցին ու դեռ պիտի շարունակեն վարկաբեկել մեր սիրելի միութիւնը՝ իր ներկայ ղեկավարութեան առած որոշումին պատճառով: Եւ եթէ տակաւին ՀԲԸ Միութեան հաւատարիմ անդամներ ու համակիրներ կը շարունակեն իրենց աշխատանքը՝ ներկայ ղեկավարները խաբկանքը թող չունենան, թէ անոնց նուիրումը որեւէ ձեւով առնչուած է իրենց հանդէպ անձնական յարգանքի ու հաւատարմութեան: Միութեան հանդէպ սէրն ու հաւատքն է որ գանոնք տակաւին կապուած կը պահեն:

Անցնող չորս տարուան ժամանակաշրջանին Մելգոնեանի տալիք հունձքին փոխարէն ի՞նչ ունի հրամցելիք ՀԲԸՄ-ի այժմու ղեկավարութիւնը: Ըսինք ու հաստատ համոզումով կը կրկնենք թէ սփիւռքի տարածքին գործող մասնաճիւղերու նուիրեալները այս ղեկավարութեան համար չէ որ կ'աշխատին, բայց անոնց նուիրումը, յարգանքն ու աշխատանքը սահման մը ունին: Ժամանակ մը յետոյ այդ ալ կը վերջանայ եւ կը մնայ միս-միսակ ղեկավարութիւն մը առանց հետեւորդի:

Խելացի ղեկավարութիւն մը պարտի հաշուի առնել իր արարքին հետեւանքները, անոնց ներկայի եւ մանաւանդ ապագային առնելիք համեմատութիւններով, եւ հարկ եղած սրբազրութիւնները կատարել, նախքան որ այդ վիճակը անսրբագրելի եւ անհակազուլի ըլլայ:

Անցնող չորս տարիները Մելգոնեանի տալիք հունձքին տեղը պարապ թողուցին, մինչ այդ ժամանակաշրջանին հարիւրեակ մը հայութեամբ զինուած երիտասարդներ կրնային հասնիլ ու լծուիլ ուսուցչական, լրագրական եւ առհասարակ մեր մշակութային գուպարին: Ազգապահպանումի կենսական այդ գուպարին օժանդակելու համար օգնութեան կանչերը լսելի են բոլոր կողմերէն: Լսել պէտք է գանոնք, առաջին հերթին վերաբանալով Մելգոնեան կրթական հաստատութիւնը:

Լի մեծ թուով ժողովուրդ էր մասնակցել քան «ազգային իշխանութեան» կողմից կազմակերպուած ձեռնարկին եւ առաջնորդարանի դիւանն էր, որ գալիս էր խաչաձեւելու անձնական ձեռնարկին եւ ոչ թէ հակառակը:

«ԱՐԱՔՍ» շարքաթերթ
ԹԵՀՐԱՆ

Advertisement for JANSEZIAN LAW FIRM, PC. Text includes: 'If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!', '225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101', 'Call Now for a FREE Consultation: 626-432-7209'. Includes a photo of Nazareth V. Jansezian, Esq.

ՇՆՈՐԱՐԱՆԴԷՍ

ԳԻՐՔԻ ՇՆՈՐԱՐԱՆԴԷՍ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱԼԲԵՐՏ ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆԻ "ՅԱՐԱՏԵՒՈՂ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ" ԵՒ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ "ՅԱՍՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ" ԳՐՔԵՐԻՆ

ԳԱՅԱՆՆԷՑԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ ԵՐԵՒԱՆ

Ընթացիկ տարուայ Մայիս 7-ի երեկոյեան ժամի 18-ին, Արամ Խաչատուրեան թանգարանի հանդիսասարահը բերից բերան լեցուն էր գրողներով, մտաւորականներով, արուեստագէտներով, թերթերի եւ հեռուստակայանների թղթակիցներով, գլխաւորութեամբ Հ Հ Մշակոյթի նախարարուհի, Յասմիկ Պօղոսեանի: Ներկայ էին նաեւ Ալբերտ Փարսադանեանի եւ Ասատուր Կիւզելեանի հարազատներն ու ընկերները:

Երեկոն նուիրուած էր նորոգ հանգուցեալ Ալբերտ Փարսադանեանի յիշատակին:

«Յարատեւող Բարեկամութիւն» գիրքի տպագրութիւնը գրեթէ աւարտուել էր, երբ 2009 թ., Մարտ 13-ին, սրտի կաթուածով յանկարծամահ եղաւ անուանի մանկավարժ, արձակագիր, բանաստեղծ, խմբագիր, բազմաթիւ գիրքերի՝ ի շարս որոնց «Գիտելիքների Շտեմարան» հանրագիտարանի (5 հատոր) հեղինակ, Ալբերտ Փարսադանեանը:

Շնորհանդէսի բացումը կատարեց եւ ջերմ խօսքերով ներկաներին ողջունեց Արամ Խաչատուրեան թանգարանի տնօրէնուհի, անուանի դաշնակահարուհի, Արմինէ Գրիգորեանը, որ հրաւիրեց հանգուցեալի գրչեղբայրներին, որպէսզի իրենց սրտի խօսքն ասեն շնորհանդէսի մասնակիցներին: Բոլոր խօսողներն էլ բարձր գնահատեցին Ալբերտ Փարսադանեանի մարդկային արժանիքներն ու գրական վաստակը: Ելոյթ ունեցաւ նաեւ անուանի կոմպոզիտոր Էդ. Միրզոյեանը, որ սրտաբուխ խօսքեր ասաց իր վաղեմի ընկերոջ, Ասատուր Կիւզելեանի հասցէին:

Տեղին է նշել որ նրանց բարեկամութիւնը սկսուել է 1963 թ.ին եւ ունի աւելի քան 46 տարուայ յուշառատ պատմութիւն:

Շնորհանդէսի գլխաւոր խօսողներից էր Ալբերտի եւ Ասատուրի մտերիմներից՝ բանաստեղծուհի Ազնիւ Կարապետեանը, որի ելոյթից մէջբերում ենք որոշ հատուածներ:

«Ես կարծում եմ որ այս ոգեղէն միջոցառումը Ալբերտ Փարսադանեանի «Յարատեւող Բարեկամութիւն» եւ Ասատուր Կիւզելեանի «Համոյ եւ Ֆատիլ» գրքերի շնորհահանդէս լինելով հանդերձ, իւրատեսակ մեծարանքի տուրք է այդ

ազնուագոյն մտաւորականների բերմանաւոր գործունէութեանը, հայրենի մշակոյթին նրանց անմասնորդ, նուիրումին՝ հայրենիքում եւ սփիւռքում: Յաւօք, Փարսադանեանը անժամանակ աւարտեց իր երկրային արգասաւոր կեանքը: Այս միջոցառումը նաեւ յիշատակի տուրք է ապրողներին կողմից: Բարեբախտութիւն եմ ունեցել անձամբ մօտիկից ճանաչելու այդ ֆենոմենալ անձնաւորութիւններին. Ալբերտ Փարսադանեանին, որպէս իմ «Խնկաբոյր Երագ» գրքի անգուզական խմբագրին, մտածող, պրպտող եւ հետաքրքրութիւնների անասման լայն շրջանակի տէր, աշխատասէր, իր գործի նուիրեալի մարդուն:

Մեծարոյ պարոն Ասատուր Կիւզելեանին շատ աւելի վաղ, գրեթէ 90-ական թուերից եմ ճանաչում: Մարդ, ով սփիւռքահայ մտաւորականութեան վառ անհատականութիւններից է, տաղանդաւոր եւ բազմաբեղուն լայն ընդգրկում ունեցող շուրջ հոգու տէր անձնաւորութիւն, ես կ'ասէի մեծագոյն հայ, ով ծնուելով եւ ապրելով հայրենիքից հեռու, հայրենիքը մշտապէս կրում է իր մէջ, նրա սրտի ամէն զարկում՝ Հայաստան է արձագաքում. եւ այդ ողով էլ կրթել ու դաստիարակել է օտար ասիերում ապրող սերունդներին.

Իր ապրած կեանքի լոյս ճանապարհին

Մեծագոյն հայի խնեթ շուրջում,

Մեր մշակոյթի վառ անհատների

Միշտ սատարել է մեկենասութեամբ:

Սրտանց շնորհաւորում եմ կեանքի ուղեգիր ստացած այդ գեղեցիկ, խորիմաստ գրքերի ծնունդը: «Յարատեւող Բարեկամութիւն»ը որպէզ երկու ազնուագոյն մտաւորականների՝ Ալբերտ Փարսադանեանի եւ Ասատուր Կիւզելեանի ջերմ, առիւնքնող ու անշահախնդիր բարեկամութեան գողտրիկ ձօն, ինչպէս նաեւ հայրենիքի եւ աշխարհասփիւռ հայ մտաւորականների փոխադարձուող յոյզերի, խոհերի ու մտորումների հոգեւոր ոսկէ կամուրջ:

Ասատուր Կիւզելեանի «Համոյ եւ Ֆատիլ» ծաւալուն չափածոյ ստեղծագործութիւնը, որի թեման մէկ այլ ժողովուրդի բանահիւտութեան պատմութիւնից է, հայ ստեղծագործողի տաղանդաւոր գրչի շնորհիւ, պոյնքը ստացել է կուռ

կառուծուածք, զգացմունքայնութեան անմիջականութիւն, գունեղ կոլորիտ եւ դրամադիկ սիւժէի դինամիկ զարգացմամբ հոգեհարազատ է դարձրել հայ ընթերցողին: Եւ վերջապէս, պոյնքը ինքնին, հիւթեղ ու հարուստ արեւմտահայերենի փայլուն յաղթարշաւ է:»

Երկոյթի գեղարուեստական բաժնում ելոյթ ունեցան Արամ Խաչատուրեան Երեւանի ու յատկապէս շնորհահանդէսին մասնակցելու համար Գերմանիայից ժամանած՝ օփերայի յայտնի երգիչ, Աբգար Մինասը, որը ապրումով կատարեց

Handle-ի Largo-ն, Mitch Leigh-ի «The Impossible Dream»-ը եւ Ալեքսանդր Սպենդիարեանի «Այ վարդ»-ը, ներկաներից խլելով բուռն ծափեր:

Այսօր եթէ պատմական Արեւմտահայաստանի քարտէսը թերթելու ըլլանք, կը տեսնենք թէ բարեպաշտ հայը, ուր որ կայք հաստատած է, հոն իսկոյն իր մատուռը, աղօթաւայրը կառուցած է: Այս արարքը ոչ միայն կը մատնանշէ իր հաւատացեալի իրողութիւնը, այլեւ կը փաստէ որ ան քանդարար չէ, այլ՝ շինող, ծաղկեցնող: Հազարաւոր վանքերու եւ եկեղեցիներու գոյութիւնը այսօր առհասարակեան են մեր աներեր հաւատքին ու հոգեւոր աննկուն կամքին: Ո՞ր ժողովուրդը աշխարհի վրայ կրնայ իրաւամբ պարծենալ իր կրօնական կեդրոններով, սրբակենցաղ դէմքերով ու մանաւանդ՝ հոգեւոր լուսաւոր կեանքով: Քրիստոնէութիւնը հայրենասիր համար եղած է ոչ թէ սոսկ կրօն կամ հաւատալիքներու համակարգ, այլ՝ կեանք, ապրելու եղանակ: Կրօնական արտայայտութեան ու հաւատքի դրսեւորման մէկ տեսակն է եկեղեցիներու կառուցումը: Մեր պատմութեան էջերը կը վկայեն այս արքայներու եւ իշխաններու խորին ակնածանքը դէպի այդ նուիրական արտայայտութիւնը: Նշանաւոր վա-


ճառականներ եւ ունեւոր դասակարգի անձնաւորութիւններ եւս, բարեպաշտական մղումներէ առաջնորդուելով, ձեռնարկած են գանազան եկեղեցիներու կառուցման ու նորոգման, վասնզի կրօնական դաստիարակութիւնը առաջնակարգ տեղ գրաւած է հայու կեանքէն ներս: Այսպիսով, մենաստանները ծաղկած են իրենց շքեղութեամբ ու մանաւանդ՝ դպրութեամբ: Ալ. Շիրվանզադէ կը գրէ. «Հայ ժողովուրդի բախտն է, էլի, եկեղեցիները փարթամ, դպրոցները անշուք, խղճուկ»:

Գնահատելի է անշուշտ այն բժախնդրութիւնը, որ ցուցաբերած են մեր հայրերը անցեալին՝ կրօնական ու բարոյական դաստիարակութեան նկատմամբ, բայց Րաֆֆիի կարծիքով, վանքերու կառուցման կողքին, հարկ էր ուշադրութիւն դարձնել նաեւ բերդերուն, պարիսպներուն, գորակոչութեան, մարտիկներու զինավարժութեան, զինամթերքի պարենաւորման եւ երկրի ու բնակչութեան ընդհանուր ապահովութեան, որպէսզի «այլեւս քուրտերը մեր երկիրը չքանդէին, մեր որդիքը չկոտորէին, եւ մեր կանայքը չչափշտակէին...»: Այս վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք իլլեցին մեր սիրտն ու քաջութիւնը. նրանք ձգեցին մեզ ստրկութեան մէջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը եւ թագը, առաւ խաչը եւ մտաւ Մանիա այլը ճգնելու համար...»: Հետեւաբար, «Ով Հայոց հին աստուածներ, ով Անահիտ, ով Վահագն, ով Հայկ, նուիրում եմ այս բաժակը ձեր սուրբ յիշատակին, դուք փրկեցէք մեզ...», կը գրէ Րաֆֆի:

Բաւական խրոխտ ու յանդուգն բաժակաճառ է այս, որ կրնար վիրաւորական թուիլ մեր նախահայրերու աճիւններուն, եթէ իրականութիւն չպարփակէր իր մէջ: Ի՞նչ է իրականութիւնը սակայն:

Մեր բովանդակ արցունքոտ պատմութիւնն է վկայ, որ մեր ժողովուրդը դարերով ապրած է ճնշման տակ, մեր երկիրը անվերջ ասպատակուած է, մեր սրբավայրերը հրդեհուած, մեր ձեռագիրները հրկիզուած, մեր կաճառները քանդուած, մեր քնարը ջարդուած, մեր հանճարը ջախջախուած: Ի՞նչ ըրած ենք այս ամբողջ անօրէնութեանց դիմաց, եթէ ոչ՝ ներած, համբերած, աղօթած: Ինչո՞ւ կարելի չէր հակադարձել քանդարարի ամեհի հարուածին եւ կասեցնել անոր յառաջխաղացումը, մաքրել չարութեան բոցը՝ ինքնապաշտպանութեամբ: Այնպէս կը թուի, որ նախաքրիստոնէական շրջանի մեր աստուածները աւելի հարկու էին ու վրէժխնդիր, որ մեզ երբեք չեն թողլէր, այլ յարատեւ՝ պաշտպաններ են:

Բնական է, նոր կրօնքը իր հետ բերաւ բարձր գաղափարներ, վսեմ սկզբունքներ, որոնք գործադրուեցան սխալ ժողովուրդներու վրայ, ինչպէս՝ թուրք, մոնղոլ, սելճուք, թաթար եւն: Միով բանիւ, չպաշտպանեցինք չարը կոխով, սուրով ոչնչացնելու սրբազան սկզբունքը: Ինչքան ճիշտ կը գրէ մեծ մանկավարժ Չապարոս Աղայեան. «Մեր ժողովուրդը օժտուած է գիտական ու փիլիսոփայական ստեղծագործութեան վիթխարի կարողու-



թեամբ: Ապահովեցէք հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը եւ ապրելու տանելի պայմանները եւ կը տեսնէք, որ նա ծնունդ կը տայ իր Շէքսպիրներին, Կէօթէներին, Տարվիներին, Քանթերին ու Շէլլիններին»: Ուրեմն, ապրելու գոյութիւնը եւ ստեղծագործելու իրաւունքը զլացուած են հայ ժողովուրդին: Բայց մի՞թէ հայը իր այդ ինքնութեան ու գոյապահպանման իրաւունքը իր ձեռքով պէտք է տնօրինէր: Թող չառարկուի որ անցեալի պայմանները խիստ էին ու ասեղ: Այդ խստագոյն պայմանները պէտք է ծնունդ տային քաջարի ու խստասիրտ առաջնորդող դէմքերու, որպէսզի կարենային հայրենասէր ճակատագրանաւը փոթորկոտ ծովէն առաջնորդել անքոյթ նաւահանգիստ:

Մեր արիւնոտ պատմութեան մէջ բազում են այն պահերը, երբ հայը, միասիրտ ու միակամ, դիմած է երկաթին, ու զինու գորութեամբ պարտադրած է իր կամքը, պաշտպանած սուրբ հայրենիքը եւ բարձր պահած հայ ընտանիքի պատիւը: Անդին, սակայն, ճակատագրական սխալներ ալ գործած է՝ երկչոտութիւն եւ ստրկային հպատակութիւն ցուցաբերելով եւ ինքզինք չպաշտպանելով: Լուութիւնը, համակերպութիւնը, այո, խոհեմութեան նշան են, բայց ոչ՝ վիզին դանակ դրուած մարդուն համար: Ի՞նչ զգաստութեան կոչ կարելի է ուղղել անձի մը, որ արդէն իսկ դատապարտուած է մահուան: Ի՞նչ զգուշաւորութիւն պիտի ցուցաբերէ կախաղանի շուանը պարանոցին շուրջ դրուած մարդը: Մահապարտէն կ'ակնկալուի միայն դիմադրութիւն եւ պայքար՝ մինչեւ վերջին շունչ: Աւելի լաւ է պատիւով մեռնիլ, քան՝ յումպէտս նահատակուիլ: Չեխով պիտի ըսէր. «Չարին

չհակառակելն արտայայտում է անտարբեր վերաբերմունք այն ամէնին, ինչ բարոյականութեան ոլորտում կոչուում է չարիք»: Այլ խօսքով, «Չարին չհակառակելը լիակատար ազատութիւն կը տար յանցաւոր կամքին, իսկ դրանից, չխօսելով արդէն քաղաքակրթութեան մասին, աշխարհում քարը քարի վրայ չէր մնայ»: Բարոյագիտութեան մէջ, չարին չհակառակելը անբարոյականութիւն է: Չարը պէտք է գսպել, կանխել, չորցնել, այլապէս, հետեւանք կ'ըլլայ աղիտաբեր, հաւաւոր:

Կան մարդիկ, որ կը հակառակին ինքնապաշտպանութեան առողջ ու հզօր գաղափարին: Անոնց համար աւելի լաւ է դասալիք ըլլալ, այսինքն՝ լքել կուռաղաշտը եւ արդար մարտը, քան մնալ եւ ճակատը բաց հերոսաբար պայքարել: Ի գուր չէ որ Րաֆֆի կը գրէ, որ մեր նախնիք մեր սիրտը հանած են ու անոր տեղ զետեղած միսի անզգայ կտոր մը: Այդ միսի կտորը բացարձակապէս գուրկ է զգացողութեան: Մեր յարգելի գրողը օրինակ կը բերէ կենդանիները, որոնք բնազդաբար կը յարձակին մարդոց վրայ, կը ճանկեն, կը խածնեն ու կը յօշոտեն՝ եթէ անոնց վնաս հասցուի կամ իրաւունքը կորուսի իրենց ձեռքէն: Ուրեմն, մարդիկ կենդանիներէ՞ն ալ ցած են զգացողութեան տեսակէտէ, որ ոչ մէկ ցաւի արտայայտութիւն, ոչ մէկ ինքնապաշտպանական արարք կամ հակազդեցութիւն կրնան ցուցաբերել, կը հարցնէ Րաֆֆի: Ինչպէ՞ս կարելի է կանխաւ չճշտագրել համայն ազգի մը պաշտպանութիւնը ի դիմաց վայրենի յարձակումներու: Ինչպէ՞ս հանդուրժել տասը հազար ձեռագիրներու հրկիզումը Սելճուքներու կողմէ եւ չմտածել յառաջիկայ յորդաններու յարձակումներու կանխումի մասին: Եւ վերջապէս, ինչպէ՞ս ժուժել ի դիմաց անհամար գրկանքներու, քաղցի, ծարաւի, բռնաբարումի անպատուութեան եւ այլ բազմատեսակ բարբարոսութեանց ու խժոժութեանց: Այս խորթ զգացումները նկատի ունենալով, Րաֆֆի կը դժկամի կենացը խմել մեր նախնեաց ոսկորներուն:

Հետաքրքրական է, որ մեր իրականութեան ներս որդեգրուած կը գտնենք իւրաքանչիւր փիլիսոփայութիւն մը, ըստ որում՝ փոխանակ թշնամիին ռազմավարական եղանակին հետեւելու եւ հակադարձելու ակն ընդ ական եւ ատամն

Շարք էջ 18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս տարի լրանում է Լոս Անջելեսի «ՄիՓԱՆ» երգչախմբի հիմնադրութեան 30-ամեակը
 Տօնական համերգի համար հրաւիրում են երգիչ-երգչուհիներ
 Երգչախմբի հիմնադիր եւ գեղ. դեկավար՝ ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ
 Խմբավար, Երեւանի օպերային թատրոնի նախկին խմբավար՝ ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐՈՍԵԱՆ
 Տեղեկութիւնների համար պանգահարել ՀԵՆ. Անասեան՝ (323) 466-3726, 217-5730
 Ս. Վարոսեան՝ (323) 469-1879, 610-1314
 Րաֆֆի Թորոսեան՝ (626) 797-9788

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ԱՐԵՒԻ ՅՈՏԸ... (ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Հենրի Կ Ա.Ն.Ա.Սե.Ա.Ն (Շարունակում մախորդ թիւէն)

Լարուածութիւնը երկու ընտանիքներից ներս, հասել էր ծայրայեղութեան: Արտաշէսի համար խնդիր չկար: Նա տղայ էր, ազատ գործելակերպի մէջ, ազատ որոշումներ կայացնելու: Ուրիշ էր պարագան Լուսինէի համար: Հայրը կարգադրել էր կնոջը, որ նա աղջկան տանի դասերի ու մնայ ուսումնարանում այնքան ժամանակ՝ մինչև Լուսինի դասերի աւարտը, որից յետոյ էլ, ինչպէս երեխայի, ձեռքից բռնած բերի տուն:

- Տատ, տատիկ, - խնդրում էր Լուսինէն՝ նրա հետ առանձնացած պահերին, - մի բան արա, հասկացրու մամային, որ խօսի պապայի հետ: Մէկ է. ես ու Արտաշէս սիրում ենք իրար: Ոչ ոք չի կարող մեզ բաժանել:

- Աղջիկս, ես հասկանում եմ: Հորդ առարկութիւնը հիմնականում Արտաշի, կը ներես, ախպարի տղայ լինելու մէջ է:

- Այ տատ, ի՞նչ նշանակութիւն ունի, թէ ով՞ ով է: Կարեւորը՝ ազնիւ ու լաւ մարդ լինելն է: Եւ յետոյ, Արտաշէսը «ախպար» չէ, ծնողներն են «ախպար», ինքը Երեւանում է ծնուել:

Ի վերջոյ, այս ամէնին վերջ տալու համար, մեր երիտասարդները որոշեցին Լուսինէի ծնողներին փաստի առջև կանգնեցնել: Արտաշէսը իր երկու ընկերների եւ Լուսինէի հետ մէկտեղ, նախօրօք պայմանաւորուածութեան համաձայն, ներկայացան Երեւանի՝ ամուսնութեան գրանցման կենտրոնական գրասենեակ, եւ պաշտօնապէս դարձան ամուսիններ:

Նոյն օրը երեկոյեան, Լուսինէի մայրը՝ Հուրիկը Անդրանիկի գրասեղանին դրեց մեր հերոսների ամուսնութեան վկայականը:

Անդրանիկը պարզապէս նայեց վկայականը, չդիպաւ անգամ: Ամէն ինչ հասկանալի էր իր համար: Ոչինչ է՛ ասաց, ո՛չ մի խօսք: Պարզապէս վեր կացաւ տեղից ու գնաց ննջարան:

Այդ արդէն առաւօտեան էր, երբ կնոջ հետ նստած էր նախաճաշի: Միայն մէկ նախադասութիւն ասաց.

- Այդ տղան դեռ շատ հեռու կը գնայ...

- Ես էլ եմ այդպէս կարծում, - ամուսնու միտքը հաստատեց բարեհամբոյր Հուրիկը:

... Ամուսնական երիտասարդ գոյգը հասաւ իր նպատակին: Սակայն, եկեղեցական արարողութիւն, հարամեկան հագուստ-կապուստ, մեծաթիւ քանակի հիւրերով խնճոյք չ'եղաւ: Թէեւ ամէն ինչ վերջացել էր, Արտաշէսն ու Լուսինէն օրէնքի առջև ամուսնացած գոյգ էին, բայց որոշակիօրէն ընդգծուած պաղութիւնը երկկողմանի ծնողների միջև մնաց այնքան երկար ժամանակ, մինչև եւ լոյս աշխարհ չ'ելաւ երիտասարդ գոյգի առաջնեկը:

Նորածին տղայի ծնունդի շնորհիւ էր, որ ասուցը հալուեց, տեղացի-ախպար պաղարիւն կապը գնալով ջերմացաւ այնքան արագ ու անկեղծ, որ մէկը-միւսից առաջ ընկնելով իրար ձեռքից էին խլում փոքրիկ մարդուկին: Եւ, եթէ մանկանը մայրական անարատ կաթով սնելու անհրաժեշտութիւնը չ'լինէր, հազիւ թէ երեխան մնար ծնողների

տանը: Ծնողների այդ մտրեմիկ, մինչ այդ չ'եղած կապի շնորհիւ էլ յաջողուեց Լուսինէին եւ Արտաշէսին, առանց տարի կորցնելու ստանալ բարձրագոյն կրթութիւն:

Ծնողներից ոչ պակաս երջանիկ էր որջ բարեկամական, ազգակցական ընտանիքի մեծերից մեծը՝ նշանաւոր լուսացարարուհի, նախկինում Թիֆլիսի յայտնի Արամեանց հիւնդանոցի՝ բացառիկ եւ իւրօրինակ վարպետութեամբ, հագուստ-կապուստի լուսացումը իսկական արուեստի վերածած Հոռոմսիմը, եթանասունին բարեւ ասող այդ հեզ, բարի ու աւանդապահ հայ կինը:

Հոռոմսիմը մի տաս տարով երիտասարդացաւ, երբ իր թոռնուհին նրան պարզեւեց մի նոր գաւակ եւս, դարձեալ տղայ:

- Միայն տղայից՝ տղայ կը լինի, - փորձել էր կատակել Լուսինէի խտաբարոյ հայրը:

Հոռոմսիմ տատիկը, որ մշտապէս «Թափառումներ» մէջ էր՝ մէկ այս, մէկ այն տղայի տանը մնալով ու հարսերի քմահաճոյքներին տեղի տալով, վերջնականապէս հաստատուեց թոռան բնակարանում՝ մեծագոյն հրճուանք պարզեւելով Լուսինէին եւ Արտաշէսին:

- Ինչո՞ւ չ'հրճուել ու երջանիկ չ'զգալ, երբ ունես երկու մանկահասակ երեխաներ, հրաշալի, անփոխարինելի Հոռոմսիմ տատիկ ու կարողանում ես աշխատել քո սիրած ասպարեզում:

Արտաշէսն աշխատում էր հրատարակչութիւնում, իսկ Լուսինէն որպէս մենեդջերսի՝ Ֆիլհարմոնիայում:

Երկու փոքրիկ տղաների հոգածութեան հիմնական բեռն ընկած էր Հոռոմսիմ տատի ուսերին: Փայլում էր Արտաշէսը: Նման չարմարաւէտ պայծամներ, ազգային համեղ կերակուրներ, աղանդերներ, - այդ ամէնը տատի շնորհիւ էր:

Հապա տատի լուսացած ալիտակեղէնները, անկողնի սաւաններն ու բարձի երեսները, որոնցից գրաւիչ, զգլխիչ հոտ էր գալիս:

- Լուսիկ, էս մեր տատի արած լուսացքը մի տեսակ ուրիշ է: Դու էլ ես լաւ լուսացք անում: Բայց ուրիշ է նրա արած լուսացքը: Զարմանալի, շշմեցողիչ հոտ է գալիս իմ շապիկներից, բա անկողինը, վերմակն ու բարձի երեսը, որոնցից կարծես թէ արեւի, ջրի հոտ է գալիս, աներեւակայելի, երբեք նման չ'եղած հոտ: Խենթենալ կարելի է:

- Սիրելիս, դու մոռանում ես, որ տատս լուսացք անելու արհեստը արուեստի բարձրութեան է հասցրել: Իրեն հարցրու, թէ ինչպէս է լուսացք անում: Կ'ուրախանայ: Կանչե՞մ, խոհանոցում է:

- Կանչի՛ր, կանչի՛ր, հետաքրքիր է, ինչպէս է լուսացք անում, որ այսքան գրաւիչ են դառնում նրա լուսացած ու արդուկած ալիտակեղէններն ու անկողինները:

- Տախ, տատիկ, արի, արի, տես ինչէ՛ հարցնում Արտաշէսը:

- Լսում եմ, լսում, Լուսօ ջան, հարցրու տղաս:

- Տատ ջան, մի քիչ խօսիր թէ ինչպէս ես լուսացք անում: Լուսոն ասում է, թէ լուսացք անելը քեզ մօտ արուեստ է:

- Դէ, մի քիչ չ'ափազանցում է Լուսոն: Իսկապէս լուսացք անելը արուեստ է: Եթէ ուզում ես հարազատներիդ հաճոյք պատճառել, ապա

պիտի պահպանես լուսացքի չգրուած, բայց փորձուած կանոնները: Ես ժամանակին այդ ամէնը սովորեցրել եմ Լուսիկի մօրը, որը փոքր եղած ժամանակ օգնում էր ինձ:

- Մայրս էլ ինձ է սովորեցրել, - տատիկին ընդհատեց Լուսինէն:

- Այո՛, աղջիկս, դու էլ ես լաւ լուսացք անում:

- Ձէ, տատիկ, քոնը ուրիշ է, - այս անգամ ընդհատեց Արտաշէսը:

- Ասեմ, որ, ոչ այնքան կարեւոր է լուսացք անելը, որքան այն չորացնելն ու արդուկելը: Դեռ հիմա այն արդուկները չկան, ինչ որ կային առաջ: Նախ՝ առաջին պայմանը, լուսացքը արեւի տակ չորացնելն է, որպէսզի արեւի հոտ գայ, յետոյ՝ կարեւոր է արդուկ անելը: Առաջուկ արդուկները ծանր էին ու չուզուից պատրաստուած, եւ ամենակարեւորը՝ փայտէ ածուխով էին տաքացում, եւ այդ փայտի հոտն էր, որ միախառնուելով արեւի հոտին, բոլորովին իւրայատուկ բուրմունք էր առաջացնում: Պիտի խօսես, խաղաս լուսացքի հետ...:

- Ինչ ասի՞ր, տատ, արեւի հոտ, ճիշդ լսեցի՞...

- Այո՛, տղաս, ճիշդ լսեցիր, հիմա ի հարկն դժուար է այդ հոտը քաղաքում ստանալ, որովհետեւ ամէն ինչ էլեկտրական է. լուսացքի մեքենայ, էլեկտրական արդուկ եւ այլն: Իմ փափաքած լուսացքի որակը մասամբ ապահովելու համար գէթ պարտաւորիչ պայման է լուսացքը արեւի տակ չորացնելը:

- Իսկ եթէ՞ արեւ չ'լինի, - միջամտեց Արտաշէսը.

- Արեւ չ'եղած օրը լուսացք մի՛ արա եւ կամ էլ՝ հրաժարուիր «արեւի հոտ»ից... հա՛, հա՛..., մի՛ ժպտայ, երիտասարդ, այսօրուայ քո ոգեւորութիւնը՝ լուսացքը արեւի տակ չորացնելու արդիւնքից է: Շատերը չ'զգիտեն այս ամէնը: Փառք Աստուծոյ, Երեւանում արեւ շատ կայ, ասել է՝ նրա հոտն էլ շատ կը լինի...:

... Անցան տարիներ: Արտաշէս Յովհաննիսեանի գործերը լաւ չէին: Իբրեւ թէ իր թոյլութեամբ տպագրուած ու հրատարակ իջած մի գրքոյկ, խտաբարոյն քննադատուել էր իշխանութիւնների կողմից: Աւուրած էր թէ նրա մէջ կային հակախորհրդային մտքեր:

Արդիւնքում՝ Արտաշէս Յովհաննիսեանը ոչ միայն հեռացուեց կուսակցութիւնից, այլեւ պաշտօնից: Սպասուած յաջողութիւնը չ'ու-

ղեկցեց նաեւ Լուսինէին: Տարին ամբողջ, շրջագայութիւններ տարբեր շրջաններում ու հեռաւոր գիւղերում, իսկ Երեւանում՝ մէկ-երկու ելոյթ, այն էլ՝ մէկ-երկու երգով: Ճիշտ է ճանաչուած երգչուհի էր, բայց այն փառքը, որին սպասում էր՝ այդպէս էլ չ'եկաւ: Կատարուեց անպատիւն:

Լուսինէն ընդգրկուած էր արտիստական մի խմբի մէջ, որը Բանաստեղծներ կայացնելու էր հայ մշակույթը: Խմբի մեկնելու օրուայ վաղորդային յայտնի դարձաւ, որ խմբի ցուցակից հանուած է Լուսինէ Յովհաննիսեանի անունը:

Ամէն ինչ յստակ էր. պատճառը Արտաշէսի՝ իբրեւ թէ այլախոհ լինելն էր:

Յուսահատութիւնը պատել էր ոչ միայն Յովհաննիսեանների ընտանիքն, այլեւ ինամիներին ու նրանց ընտանեկան ողջ պարագաներին:

Խախտուեց համերաշխ ընտանիքի անդորրը: Արտաշէսն ու Լուսինէն գրեթէ չէին հաղորդակցուած իրար հետ: Իւրաքանչիւրը իւրովի էր արժեւորում առկայ իրադրութիւնը: Արտաշէսը իրեն մեղաւոր էր զգում, որ իր պատճառով Լուսինէն գրկուեց արտասահման մեկնելու հնարաւորութիւնից: Լուսինէն հոգու խորքում գիտէր, որ ամուսինը մեղաւոր չէ, որ նրա գլխին ինչ որ բան են սարքել, բայց փաստը մնում էր փաստ, որ նրանք մէկընդմիջտ գրկուած էին արտասահման մեկնելու հնարաւորութիւնից:

Մի քանի օրուայ լուռութիւնը խախտեց Լուսինէն.

- Արտաշ, ի վերջոյ պարզեցի՞ր, թէ ինչը-ինչոյց է, դարձել ես լուսակեց, մի բան ասա իմ ամանք: Քո տանը չեղած ժամանակ հայրս ու մայրս անընդհատ զանգահարում են:

- Ի՞նչ ասեմ, Լուսօ ջան, - մտքում ուրախանալով, որ կինը խախտեց պրկուած լուռութիւնը, - ես վաղուց էի զգում, որ իմ տեղակալը, դու գիտես իրեն, էն ապաշնորհ, իբր թէ գրող վահրամ Գնդունուն:

- Հա՛, ի հարկէ գիտեմ, յետո՞յ, յետո՞յ...

- Յետոյ այն, որ ինքը վաղուց էր երազում իմ աթոռին նստել, եւ իմ Մոսկուա մեկնած օրերին, իմ փոխարէն, իբր թէ ես տեղեակ եմ, թոյլատ-

Շարք էջ 17

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ (1899 - 1937)

Ակսել (Ալեքսանդր) Բակունցը, չնայած ունեցաւ հազար մի տասնամեակի գրական կեանք, սակայն իր գունեղ արուեստով խոր հետք թողեց հայ սովետական արձակ-կի գարգացման մէջ: Նա ծնուել է 1899 թուականին Գորիսում:

Գորիսի Ծխակահի դպրոցն աւարտելուց յետոյ Բակունցը 1910 թուականին ընդունուեց Էջմիածնի Գէորգեան ճեմարան: Ընդունակ, ուշիմ պատանին գիտելիքները մեծ պաշար է ձեռք բերում, խորանում է հայերէնի գրականութեան մէջ, յետագայում մանկավարժական աշխատանք կատարում Զանգեզուրի Լոր գիւղում:

Ուսման տենչը Բակունցին տանում է Խարկով: 1923 թուականին նա աւարտում է Խարկովի գիւղատնտեսական ինստիտուտը, վերադառնում ու աշխատանքի է անցնում իր հայրենի լեռնաշխարհում Զանգեզուրում որպէս գիւղատնտես: Կեանքի հետաքրքիր ճանապարհ է անցել նա. հայոց գրէք է սովորեցրել գիւղի երեխաներին, հրացանը ձեռքին պաշտպանել է հայրենի հողը, գիւղատնտեսական գիտելիքներով գինեկ հայերի սերմնացաններին եւ, վերջապէս, լիովին նուիրուել գրականութեանը, պատկերել իր վերածնունդը ժողովրդի անցեալն ու պայծառ ներկան: Բակունցի երկերը մեծ հետաքրքրութիւն են առաջացնում ընթերցողի մէջ: Մի գրուցում, դիմելով հանրահռչակ նկարիչ Մարտիրոս Սարեանին, Ալեքսիք Իսահակեանն ասել է. «Կոմիտասի երգերի եւ քո գոչների մասին խօսում են որպէս բառերով անթարգմանելի հրաշքների մասին: Բայց դա այնքան մի գրող, որի բառերը գրնգում են կոմիտասեան շնչով եւ փայլատակում են քո կտակների գոյներով: Դա Ակսել Բակունցն է»:

«Խոնարհ Աղջիկը պատմավէպը Բակունցի լաւագոյն երկերից է: Քնքուշ սէր ու թախիծ կայ այդ պատմութեանը, մորմոքուն գզացմունքներ, որոնք պատկերում են մանկութեան յուշերի պէս քաղցր եւ երազային:

1924 թուականին լոյս է տեսնում «Գաւառական նամականին», որը անմիջապէս գրաւում է հասարակութեան ուշադրութիւնը, իսկ «Մեր գիւղերում», «Նամակներ գիւղից» ակնարկաշարերը նոր լոյս են փոխում նրա անսպառ եռանդի ու էութեան բացայայտմանը: Ահա թէ որտեղից են սկզբնաւորում Բակունցի ստեղծագործութեան ծլարձակման առաջին քայլերը:

Խոստան ակնարկաշարերի կողքին տպագրում են նրա «Միրհաւ», «Սաբու» եւ «Ալպիական մանուշակ» պատմութեան քննարկը:

1927 թուականը վճռորոշ եղաւ Բակունցի համար. նա ընթերցող հասարակութեան սեղանին դրեց «Միւսադոր» ժողովածուն՝ անկազմ ու անհրապույր ձեւաւորումով, որը թէեւ չէր շարունակ արտաքին փայլով, բայց գրչի կախարհը շփոթեց ծոց-ւորել էր գրքում, որին փառաւոր կեանք ու ապագայ վիճակուեց՝ իր տեղը հաստատելու գրականութեան հին ու նոր արժէքների շարքում: Ջերմ ընդունելութիւն է գտնում «Միւսադորը», երեւոյթը բացայայտ էր. յաւիտենական գեղեցկութիւնների կողքին գեղազետ Բակունցը տեսնում էր դառն ու լուռ ցաւեր, որոնք կար նման էին աշխարհի ծայրերում ապրող մարդկանց ցաւերին: Նա չէր իտէպլականացնում բնաշխարհը, այլ մտահոգ էր բնու-

թեան անգուզական գեղեցկութեան մէջ վեր հանելու ժողովրդի դառը կացութիւնը: Համակիրները շատ էին, բայց քիչ էին չարախօս թշնամիները: Չարենցը անհանգստացած նախազուշացնում էր, որ Միւսադորում չկորցնի իր պայծառ ուղին, փորձի դուրս գալ նոր ուղեծիր:

Քո «Միւսադորում» թախիծ է ծորում

Եւ կարօտ մանկութ հարագատ ձորի,

Աշխատիր սակայն, որ այդ մութ ձորում

Քո պայծառ ուղին անդարձ չկորի:

Բակունցը անհողդողդ էր, հարագատ իր համոզմունքներին, հին արժէքների կողքին դնում էր իր սրբատաշ որմը, նորի իր արարումը: Նա ցանկանում էր ձեռքագատուել հողժողովումտի իր ծառայութիւնից եւ անցնել ստեղծագործական աշխատանքի: Բակունցի բեմագրերով նկարահանում են մի քանի շարժանկարներ որոնցից է «Զանգեզուրը»՝ աղճատուած ու պարտադրանքով փոփոխուած: Բակունցը ձեռք է գարկում երկնելու մեծ կտաւի ստեղծագործութիւններ եւ սկսում իր «Խաչատուր Աբովեան» վէպը, որից ինչ-ինչ պատճառներով միայն որոշ պատահիկներ են հասել...Չնայած տարակարծութիւններ կան, որ վէպը լիովին աւարտել է գրողը:

Բեղուն գրիչը կատարում էր նաեւ թարգմանութիւններ՝ դրա վառ վկայութիւնն է Գոգոլի «Տարաս Բուլբան» /1934/, 1935 թուականին աշխարհաբարի է փոխադրում Վարդան Այգեկցու «Աղուեսազիրը»՝ առակաների ժողովածուն: Դեռ 1930-ական թուականներից այլախոհի պիտակի տակ էին առել շատերի հետ նաեւ Բակունցին: Գրական հակառակորդների կողմից ծայր էր առել բամբասանքն ու բանասրկութիւնը, ինչպէս ինքն էր գրում, գրպարտում էր «մահացութիւնը մեղքերի մէջ»: Քաղաքական ծանրագոյն մեղադրանքներ են բարդում Բակունցի հասցէին - 1936 թուականի Օգոստոսի 9-ին շատերի հետ նաեւ ձերբակալում են նրան: Նոյնն էր մեղադրանքը «հակայեղափոխական, հակախորհրդային, ազգայնամոլական գործունէութիւն»: Բանտային խիստ պայմաններում 11 ամիս անընդմէջ Բակունցին ենթարկում են կտտանքների: Նրա ինքնաարդարացմանն ճիգերը ապարդիւն են անցնում, իսկ յուզիչ նամակները՝ մտում անպատասխան: Նամակներից մէկում այսպէս է ներկայացնում իր հոգեվիճակը. «Մանր է, շատ ծանր...Մտածում ես մէկ ժամ, երկու, երեք, մէկ օր, երկու օր, մտածում ես չիմարանալու աստիճանի, մինչեւ չիշողութիւնդ փուլ է գալիս, եւ չգիտես գիշեր է, թէ՞ ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կեանքը մնաց փակ դռների ետեւում...Երբ ես հարցնում եմ, թէ ի՞նչ է լինելու յետոյ, յուսահատում եմ, գիտակցութիւնս մթազնում է, Չղաճգութիւնները խեղդում են կոկորդա...Ի՞նչ է լինելու ինձ հետ...Գոյութեան միակ նպատակը մնում է գրականութիւնը... ինձ գրելու եւ կարդալու հնարաւորութիւն տուէք, ինձ գիրք ու մատի՞տ տուէք...»: Բակունցի փոփոխած յոյսերն ապարդիւն են անցնում: Նրան ոչ թէ աքսոր, այլ 25 րոպէանոց դատական նիստից յետոյ դատապարտում են պատժի առաւելագոյն չափի գնդակահարութեան:

ՀԱՅՐԵՐՈՒ ՕՐԸ ՍԿԱՍԾ Է ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱՃԵԱՆ

Շուրջ 4000 տարի առաջ, միջագետքի Բաբելոնի մէջ, երիտասարդ տղայ մը, էլմուսի անունով, փափաքած է պատուել իր հայրը, եւ անոր առողջութիւն ու երկար կեանք մաղթել: Ան կը քնադակէ իր մաղթանքները կաւէ շինուած խաւաքարտի մը վրայ: Յստակ չէ թէ Բաբելոնի որ շրջանին մէջ ապրած են հայր ու տղայ: Միայն թէ ընդհանուր ազգաց պատմութեան մէջ, այս արարքը նկատուած է Հայրերու Օր մը: Քրիստոնեայ երկիրներու մէջ, ընդհանրապէս Սբ. Յովսէփի սօնի օրը նկատուած է Հայրերու Օր: Հարիւրաւոր դարեր անցած են: Ամերիկայի Ուաշինգթոն նահանգին մէջ, ամերիկահի մը, մայրը կորսնցուցած փոքր տարիքէն եւ հայրը մեծցուցած ըլլալով գինք ու միւս 5 գաւակները, 1909 Մայրերու Օրու քարոզի մը ներկայ կ'ըլլայ, եւ կ'որոշէ իր հայրը պատուել օր մը: Այսպէս, հայրը ծնած ըլլալով Յունիս ամսուն, ան կ'ընտրէ Յունիս 19, 1910 եւ կը սօնէ ամերիկայի առաջին Հայրերու Օրը:

Յաջորդ տարիներուն, Ամերիկայի գանազան քաղաքներու մէջ, սկսած են սօնուել տարին օր մը՝ որպէս Հայրերու Օր:

Մինչ Մայրերու Օրը կը սօնուի եռանդով ու խանդով, Հայրերու Օրը, սկզբնական տարիներուն հեզնութեան առարկան կը դառնայ, եկեղեցիներէն դուրս: Մինչեւ իսկ տեղական թերթ մը ծաղրած է ըսելով ուրեմն պէտք է սօնել նաեւ մեծ հայրերու Օր, գրագրուհի օր, եւ այլն եւ այլն:

1924ին սակայն, Միացեալ Նահանգներու նախագահը թիկունք կը կանգնի Հայրերու Օրի մը գաղափարին, եւ Ազգային Կոմիտէ մը կը կազմուի 1930ին: Փոխանակ դէպի

լաւ երթալու, այս կոմիտէն կ'առեւտրականացնէ Հայրերու Օրը, եւ սուղ նուէրներ կը փորձեն ծախել: Մինչեւ վաթսուական թուականները, ընտանեկան կապերը տակաւին զորաւոր ըլլալով, գաւակները գրեթէ ամէն օր կը տեսնէին կամ կը հաղորդակցէին իրենց հօրը հետ, եւ հետեւաբար միայն Մայրերու Օրով կը բաւարարուէին: Սակայն երբ ուսումի կամ գործի պատճառով տարբեր նահանգներ բնակող գաւակները բազմացան, հայրերու օր մըն ալ սօնելու կարիքը գզացուեցան: Առ այդ 1966ին նախագահ Lyndon Johnson բանաձեւ մը վաւերացուց, եւ Յունիս ամսուայ 3րդ կիրակին հայրերու օր հռչակեց: 1972ին նախագահ Nixon օրէնքի վերածեց գայն: Այս օրը գրեթէ ամբողջ Ամերիկայի մէջ, գաւակները, յաճախ իրենց մօր մասնակցութեամբ, կը պատուեն իրենց հայրերը տան մէջ, ճաշարան մը տանելով գանտնք կամ ալ ծերատուններէն իրենց ստուեր բերելով գանտնք: Գրեթէ միշտ, հայրերը նուէրներ կը ստանան, երբեմն ալ ծաղիկփունջեր: Նոյնիսկ բանտերը բացառիկ դիւրութիւններ կու տան հայրուն՝ գաւակներուն այցելութիւնները ընդունելու համար: Բնիկ ամերիկահայերը, որոշ տարբերութեամբ ընդգրկած են երկրին ապրելակերպը: Հայախօս ամերիկահայերու համար ալ գրեթէ նոյն պարտադրանքներով (ուսում կամ գործ) տարբեր նահանգներ կամ հեռաւոր քաղաքներ գացողներուն թիւը կ'աւելնայ տարուէ տարի: Այսու հանդերձ հայ գաւակները, գրեթէ միշտ, ձեռով մը հաճելի Հայրերու Օր մը կ'ընծայեն իրենց հօր: Իսկ հայրերը, մանաւանդ մեծ հայրերը մեծամասնութեամբ կը նախըտրեն վայելել այս օրը, իրենց գաւակներուն ու թոռնիկներուն հետ, փոխանակ ճաշկերոյթ-պահանջսի երթալու:

ՈՒՍԱԻՈՐՆԵՐԻ 3 ՍԵՐՈՒՆԴ (ՅՈՒՇԵՐ)

ԱԻՆՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Սարգիս Կարապետեանը ծնուել է 1915 թուին Լոռեստան նահանգի Շափլաղ գաւառի Քեռթ հայաբնակ գիւղում: Յաճախել է իրենց գիւղի հայոց դպրոցը, սովորելով հինգ տարի: Մեծ պայն էր մղուի (հաջի) Մուսախան Կարապետեանը, որն 1930 թուին որոշում է հետիոտն ուխտի գնալ դէպի Երուսաղէմ, իրականացնելու համար երկար տարիների փափաքած երազանքը: Մէկ ամսից յետոյ կարողանում է հասնել սուրբ քաղաք եւ ուխտը կատարելուց յետոյ ցանկանում է վերադառնալ ծննդավայր գիւղը: Ապահովութեան համար որոշում է քայլել վաճառականների ապրանքատար ուղտերի կարաւանների հետ: Այն օրերին նման կարաւանների երթեւեկութիւնը յաճախակի բնոյթ էր կրում: Ուղտերի կարաւանների ետեւից քայլելիս յանկարծ նկատում է որ բեռան մի մեծ կապոց վար է ընկնում: Ուղտին նստացնելով բեռը նորից բարձում ու ճամբայ են ընկնում: Մուսախանը որ արդէն դարձել էր մուղսի, ուղտապաններից մէկին պարսկերէն լեզուով բարեւում է: Նա եւս պատասխանում է պարսկերէնով, որն մեծ ուրախութիւն է պատճառում Մուսախանին եւ պարսիկ ուղտապանին:

Քաղաքը, ստանալով մուղսի կոչում: Պարզում է որ դրանք բոլորն էլ իրանցիներ են, որոնք կայք են հաստատել արաբական անձայրածիր երկրներում եւ զբաղուած են բեռների փոխադրութեամբ, մեծահարուստ վաճառականների համար: Ուղտապանները եւս ուրախանում են իրանցի նոր մի ծանօթի հանդիպելու համար, այդ հեռաւոր անապատներում: Մուսախան պապը որ արդէն կոչում էր մուղսի, հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում Երուսաղէմից, Յիսուս Քրիստոսի դամբարանից եւ միւս սրբապալարերից: Անշուշտ այն օրերին հազուադէպ երեւոյթ էր այցելել Երուսաղէմ եւ ստանալ մուղսի անուանումը: Հետեւելով իր պապերից եկած սովորութիւններին, 1965 թուին նա իր տիկնոջ Նուարդի հետ ուխտի է գնում Երուսաղէմ, ի հարկէ աւելի զարգացած միջոցներով: Ապա այնուհետ նա հմայուած քրիստոնէական սրբատեղիներով, միշտ քաջալերում եւ խրախուսում է իր գաւակներին, անպայման ուխտի գնալ Երուսաղէմ եւ ծնկաչոք աղօթել Յիսուս Քրիստոսի դամբարանին: Կատարում է մուղսի Սարգիս Կարապետեանի ցանկութիւնը: 2009 թուի Ապրիլի 15ին իր դուստրը Խոսրովաղուխտը եւ ամուսինը Երուսաղէմը ուխտի են գնում Երուսաղէմ: Այսպիսով երեք սերունդ, տարբեր ժամանակներում եւ տարբեր միջոցներով այցելում են սուրբ քաղաքը, ստանալով մուղսի կոչում:

ՏՐՈՒԿ «ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ՉԱՓԱՆԻՇ»Ի ՄԱՍԻՆ

Շարունակում է 1-ին

գիր, «Մասիս» Շարաքերի հիմնադիր խմբագիր Բի մինչև իր մահը անոր խմբագրության գործունեության մեջ: Տարուքի մահից հետո Մադրեանի ցուցի մահուան տխուր առիթով:

Այս կապակցությամբ, գաղութա մեքսիկոյ տեսնող համարեա մեզի պաշտոնակից բոլոր բերքերը, «Մասիս», «Նոր Օր», «Նոր Կեանք», «Նոր Հայաստան» սգացին հայ մտաւորականի մրանժամանակ մահով իր ետին ձգում քայլը: Յատուկ մահախօսական տոմս ու ոգեկոչական յօդուածով մր «Ասպարէզ» իր կարգին, նշանակելի մօտեցում արձանագրած էր, լրջօրէն անդրադարձնալով մեր ողբացեալ ընկերոջ անդարմանելի մահուան մասին: Ան վեր առած էր Մադրեանի ազգային, հասարակական եւ մտաւորական արժանիքները: (կարդալ «Ասպարէզ» էն արտատպում, ծանօթ արձակագիր Պօղոս Գուրբեյանի ոգեկոչական յօդուածը «Մասիս» ի ներկայ բիւի մէջ):

Ինչ ալ ըլլան հանգամանքները, գնահատելի էին, անխտիր, մեր բոլոր օրկանները, որոնք ցուցաբերեցին աւուր պատշանի միասնական ոգի, որ կու գար շեշտելու մեր այն հաւաքական ցար, թէ նման մահեր կորուստ են տակաւ ստուարացող մեր մտաւորական ափ մը փաղանգին, Սփիւռնաշխարհի տարածքին:

Բայց, ափսոս, Բանի մը օր ետք, նորոգ ողբացեալ Տօֆ. Մադրեանի հողկոչութիւն վրայ գետեղում ծաղկեպսակները դեռուս չի բառամած, Յունիս 19, 2009-թ. համարով «Ասպարէզ» հապենպ շեշտով մեծ սխալ մը գործած ըլլալու յանցարտութիւնը մասամբ դարմանելու համար, անփափկանկատօրէն, 180 աստիճան տրամագիծով կը շրջէ Պօղոս Գուրբեյանի մատնանշած գնահատանքները, որոնց մէջ հիմնական առանցքը պիտի կազմէր այն ընդունելի գաղափարը, թէ՛ «Շատերուն խորշակ կը պատնանէ: Այն կու սակցականը, որ իր դաւանած մոլեռանդ ու ծայրայեղ գաղափարաբանութեան կը գոհէ հայկական բիրեղ իր հոգին: Բարեբախտաբար, Մադրեանի նման հայրենասէր մտաւորականներ կը գործեն Բաղաբալան մեր բոլոր կազմակերպութիւններէն ներս...»:

«Գնահատանքի Չափանիշ» վերտառութեամբ «Օրը Օրին» առաջնորդող սիւնակին մէջ փոխ առնուած անունի մը ստորագրութեան տակ, արուեստական, անտեղի եւ անժամանակ կերպով, Մադրեանի անուան շուրջ կը հիւսուէին մահագրութիւններու պատմութեան մէջ չի տեսնուած անուանակերպումներ, գրպարտութիւններ կամ ցեխարձակումներ: Անոնք պէտք էր խնայուէին, նոյն որակումներուն թիրախ չի դառնալու համար: Ինչպէ՞ս կարելի է

մոլեռանդի մը վկայութեան ապաւինիլ հաւատալու համար, որ մեղադրուողը մոլեռանդ մըն է: Այսպէս. Մադրեան «մոլեռանդ ու ծայրայեղ կու սակցական» կը մեղադրուի, որովհետեւ «հեռատեսիլի առջեւ եւ բերքերու մէջ «կծու խօսակ եւ գրող» իսկ խանութներու մէջ «խայտառակ» արտայայտութիւններ ունեցող անձնաւորութիւն եղած է: «Ազգադաւ», «Վատահամբաւ» Լեւոն Տէր Պետրոսեանը պաշտպանած է, ի դէմս Դաշնակցութեան: Մադրեանը Դաշնակցութեան վրայ «մաղծ» քափող է եղած, «եղած է այն կու սակցականը, որ իր դաւանած մոլեռանդ ու ծայրայեղ գաղափարաբանութեան գոհողը՝ հայկական բիրեղ ոգին: Ի՞նչ է փնտռածը համարուն օրկանի սիւնակագրին: Հնչակեան դեկավար եւ հայրենի ժողովրդավար դիրքերու վրայ գտնուող գաղափարաւոր Մադրեանը պիտի գնահատանքի արժանանար միայն ա՞յն պարագային, երբ Դաշնակցութեան կողմէն կայնած՝ պայտարեր հայագրի առաջին Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի վարած ազատագրական պայքարին դէմ:

Կարն: Մարդ՝ «Ասպարէզ» էն չէր ակնկալեր, ոչ մահագոյժ տոմս եւ ոչ ալ առանձինն, բող որ աւուր պատշանի, գնահատելի ոնով ու բովանդակութեամբ գրուած ոգեկոչական մը: Լաւ պիտի ըլլար՝ ոչ գրուէր, ոչ հերքուէր եւ ոչ ալ այսօր վիճակը քարճացուէր, խնայելու համար հայ մամուլի վարկին: Ամէն դէպքին, մեր յատուկ շնորհակալութիւններ կը յայտնենք մեր գրչեղբոր, արձակագիր Պօղոս Գուրբեյանին՝ մեր արժանաւոր ընկերներէն Տօֆ. Յարուքի մահից հետո մահուան տխուր առիթով գրած ոգեկոչականին համար: Ընդունիմք կամ ոչ՝ մեծ է Տօֆ. Մադրեանի մտաւորական, հրապարակախօսական, հրապարակագրական, մշակութային, հայապահպանման եւ հայրենասիրական ներդրումը մեր գաղութէն ներս: Մեր գաղութը երախտապարտ պիտի մնայ անոր վաստակին ու վառ պիտի պահէ անոր յիշատակը:

Այս բոլորէն ետք, վերադառնանք մեր սկզբնական մտորումին: Ինչքան իմաստուն են գտնուած մեր նախահայրերը, որոնք փորձառար պատգամած են գիրար յաջորդող սերունդներուն. «տասը չափէ, մէկ կարէ» բելադրութիւնը, որ անցած է ժողովրդական առածի կարգին: Այդ ժողովրդական ասացումը իր կառուցողական դերը կը խաղալ «Գնահատանքի Չափանիշ» վերտառութիւնը կը կրող «Օրը Օրին» սիւնակի խմբագրութեանէն առաջ: «Ասպարէզ» ի մէջ լոյս տեսած ոգեկոչականը՝ ինչպէս «Ասպարէզ» կը սիրէր գործածել ստորեւ չակերտուած ածականները՝ «հակառակորդին» կամ «Մրցակիցին» նետուած օգտակար Բայլ մը նկատուի: «Մասիս»

ՐԱՅՅԻՆ ԲԱԺԱԿԱՆՈՐ

Շարունակում է 14-ին

ընդ առաման հին կտակարանեան հօր պատուիրանով, մեր հայրերէն ոմանք մտածած են չարին դէմ պայքարիլ բարութեամբ ու դրական գործերով: Դասական նմոյշ է Վրթանէս Փափագեանի մէկ արտայայտութիւնը այս ուղղութեամբ՝ «Մեր թշնամիներէն մենք միշտ վրէժխնդիր ենք եղել մեր ստեղծագործութիւններով: Աւերուած միտան փոխարէն կանգնեցրել ենք երկուսը»: Մեր գրողներէն՝ Ստեփան Զօրեան կը վկայէ, որ Վրթանէս Փափագեան ըսած է՝ «Իր մեծ աղէտների եւ կորուստների օրերին, հայ ժողովուրդը միշտ ապաւինել է իր դպրութեան՝ բնագրաբար թէ գիտակցաբար»: Չկայ աւելի պաշտելի ու համբուրելի գաղափար, քան՝ բովանդակ կեանք մը փարիլ դպրութեան, բայց վերահաս վտանգէն խուսափելու համար, թէկուզ անհաւասար մարտի մէջ, հարկ է առճակատիլ ու խիզախաբար կուրիլ: Դպրութիւն գարգացնելու համար խաղաղ պայմաններ են հարկաւոր: Համայն աշխարհի պատմութիւնը վկայ, որ խաղաղապէր ազգեր, վերապրելու համար, սուր բարձրացուցած են ու պաշտպանած աճելիութիւնը իրենց ժողովուրդին եւ անարգել գարգացումը՝ մշակութի: Սա անգիր օրէնք է, որ հարկ է առանց պայմանի՝ խստագոյնս չարգել:

Արդար ըլլալու համար, նշենք նաեւ, որ մեր պատմութիւնը կը վկայակոչէ հայ հերոսամարտերը, որոնք տեղի ունեցան ի մէջ մեր հայ քաջամարտիկներու եւ վայրենի ոտխի: Այստեղ յիշատակութեան արժանի են նաեւ մեր հերոս

սուհի կանայք, որոնք իրենց հերոսական պայքարով միշտ նեցուկ կանգնած են իրենց ամուսիններուն: Հայրենակցական Միութիւններ եւս գորակցեցան, դիմադրեցին, պայքարեցան, եւ մարտադաշտի վրայ շատ մը յաջողութիւններ արձանագրեցին: Այդ սիրալի էջերը մեր պատմութեան մէջ լոկ պատիւ ու պարծանք կը բերեն մեր ազգին:

Յետադարձ հայեացքով, երբ հայանցիկօրէն կը քննարկենք մեր պատմութեան արիւնալի էջերը, ո՞վ գիտէ, իրօք, եթէ եկեղեցիներու եւ վանքերու վրայ այդ ծախսուած մեծամեծ գումարները ծախսուէին զինավարժարաններու վրայ, յատկացուէին միջնաբերդերու կառուցման, եւ գարկ տրուէր ոչ միայն կրօնական միտքին ու հոգիին, այլեւ՝ քաղաքական վարչամեքենայի գարգացման, ունենայինք հօր երկիր, պաշտպանուիլ գիտնայինք հրոսակներու մշտատեւ գրոհումներէն, հաւանական է որ գոհը չըլլայինք ոտխի եւ թաղանին եւ կուլ չերթայինք ներկայիս աշխարհակուլ ազգերու կողմէ՝ մեր ցրուածութեան պատճառով:

Ինքնապաշտպանութիւնը հակաքրիստոնէական չէ եւ ոչ ալ հակամարդկային, այլ ընդհակառակը՝ մարդկային է, տրամաբանական ու պարտադրիչ: Հայը ի տարապարտուց գոհ գնաց բազմիցս ոտխի կանխամտածուած բիրտ հարուածին: Ժամանակն է, որ վտանգներու պարագային, բովանդակ հայութիւնը ահագանգուի եւ զինակոչուի: Լինելութեան գոյապայքարը արդար ու իրաւացի պայքար է:

ԾԱԽՈՒ Է ՄՐԳԱՀԻԹԻ ԽԱՆՈՒԹ: Պըրպէնքի Կեդրոնին մէջ ծախու է Franchise մրգահիւթի խանութ: մը: Թարմ մրգահիւթ եւ smoothies: Սեփականատէրը նոր մայր դարձած է եւ կ'ուզէ ծախել խանութը: Մենք կը հովանաւորենք առաջին երկու շաբաթը: Ծախու գին 10,000 տոլար: Գնողը կը ստանձնէ մնացեալ 7 տարուան վարձքի համաձայնութիւնը: Franchise-ը 20 տարուայ է, իսկ խանութը՝ 3 տարուայ: Հեռաձայնել Քոլէթին (818) 324-1758 թիւին: *****

BUSINESS FOR SALE: Franchise Juice Store located in the heart of Downtown Burbank for sale. Store offers fresh squeezed juices and smoothies. Owner is a new mother and does not have time to run the store. Complete turnkey business ready for you to step in. Will provide training for the first 2 weeks. Only asking \$10,000! Buyer will take over remaining 7 year lease and SBA loan. Franchise is over 20 years old and store location is 3 years old. Contact Colette at 818-324-1758

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

ՔԱԶ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 280-րդ կայանից

ՆՈՒՐՈՒԿԱԾ ԱԼԲԵՐՏ ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆԻ ԵՒ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՉԵԼԵԱՆԻ ԳՐՔԵՐԻՆ

Շարունակում է 7-էն

անվերադարձ մեկնումնիդ առիթով: Շատ էի ուզում իմ հուսաք բանքն ասել անձնապէս եւ մեր պապերի արիւնով սրբացած մի ափ հող նետել դագաղիդ: Չէի կարող հիւանդանոցում արեան թունաւորմամբ պառկած արջկանախ, Արմինէին թողնել մենակ: Բայց դու լաւ իմացիր, իմ թանկագին ընկեր, թէ եւ ֆիզիքապէս չեմ մասնակցելու քո յուղարկաւորութեան, բայց վստահ եղիր, այդ օրը, 2009թ. Մարտի 16-ին, ես իմ ամբողջ էութեամբ լինելու եմ քեզ հետ: Այո, ոչ միայն լինելու եմ քեզ հետ, այլ ինձ հետ բերելու եմ ամենից գեղեցիկ ու ամենից բուրումնաւէտ ծաղիկները, որոնք գագացումներին դողողով մատնելով քաղել եմ իմ սրտի բուրաստանից:

Ալբերտ սիրելիս, Ախր դու իրաւունք չունէիր անակնկալ հեռանալ այս աշխարհից, սուգի մէջ թողնելով քո Գոհարիկին, Դաւթին, այլ հարազատներդ, անհամար բարեկամներդ, ընկերներդ, որոնց հերթին նաեւ՝ ինձ...:

Չէ որ ես դեռ չարտասանուած շատ խօսքեր ունէի հասցէագրուած քեզ: Գոնէ առիթ տայիր շնորհալուծութիւն յայտնել քեզ յիսուն տարի իմ հանդէպ քո ցուցաբերած ուշադրութեան, եղբայրական սիրոյ ու գուրգուրանքին համար: Ես շատ բան սովորեցի քեզանից եւ մտքով ու հոգով հարատացայ քեզանով: Ես նախ քեզ ճանաչեցի, ճիշտ յիսուն տարի առաջ, քո նամակներով: Նրանք պարկեշտ գրողի, ազնիւ մտաւորականի ու հայրենասէր մարդու հոգուց արձակուած ճառագայթներ էին, որոնք եկան հեռաւոր հեքիաթների աշխարհում,

Հնդկաստանում ապրող մի հայ ուսուցչի հոգին ջերմացնելու, հայրենասիրութեան խարոյկ վառելու նրա սրտում եւ հարստացնելու նրա էութիւնը:

Դու հաւատացիր լոյսին, հաւատացիր ճշմարտութեան ու մերժեցիր խաւարը ընդունել որպէս արժէք, այլ պարզապէս՝ լոյսի բացակայութիւն...: Քո հոգու թանգարանում տեղ գրաւեցին մի միայն լոյսին, բարիին, գեղեցիկին ու ազնիւին նուիրուած ոգեղէն արձաններ...: Որպէս ուսուցիչ, դու պատրաստեցիր առողջ ու գիտակից հայրենասիրութեամբ գինուած, բարոյական բարձր սկզբունքներով ու մտաւորական կարողութեամբ օժտուած սերունդներ, որոնք իրենց հերթին քեզնից ժառանգած արժէքները կտակեցին հետագայ սերունդներին:

Որպէս քաղաքացի ու գրող, դու երբեք քո արժանապատուութիւնը, սկզբունքները, համոզումները, հոգեկան արժէքներն ու մտաւորական պարկեշտութիւնը չվաճառեցիր «վան երեսուն արծաթի»:

Անպարկեշտ մարդկանց դղեակները չհրապուրեցին քեզ. նախընտրեցիր ապրել նրանցից հեռու, պարկեշտութեան աղիւտով քո կառուցած փոքր՝ բայց անաղարտ հիւղակուծ, մինչեւ կեանքիդ վերջը:

Չարութիւնը, անագնուութիւնը, անպարկեշտութիւնը, թշնամութիւնը, նախանձն ու «մասամբ նորին», երբեք բոյն չդրին քո հոգում:

Բարեկամներով եղար շատ հարուստ, իսկ եթէ՛ պատկերաւոր ասած՝ թշնամիներդ լինէին քո օրավարձը՝ դու վաղուց սովից մահացած կը լինէիր...: Տեսակէտի հակառակորդներ անմպաման ունեցար, բայց թշնամիներ՝ երբեք:

Համեստութիւնը եղաւ քո բնաւորութեան հիմնական ու արժէքաւոր գծերից մէկը: Համեստութիւնը անշօշափելի մի շքանշան է, որը բնութիւնը պարզեւում է միայն հոգեկան ու իմացական արժէքներով հարուստ մարդկանց: Իսկ այդ շքանշանը ամբողջ գիտակցական կեանքիդ ընթացքին մնաց կախուած քո հոգու կրճից:

Կէս գիշեր է Լոնդոնում: Երեւանում ժամացույցի փոքր սլաքը կանգնել է 4-ի վրայ: Նստել եմ գրասեղանիս առաջ ու իմ հուսաք բանքն եմ գրում քեզ, իմ սիրելի Ալբերտ: Ովկիրանտացած յոյզեր, մտածումներ ու խոհեր արկածում են միտքս ու հոգիս: Չեմ կարողնում հաշտուել քեզ այլեւս չտեսնելու գաղափարի հետ: Բայց միաժամանակ մտածում եմ որ իմ սիրելի ընկերը, Ալբերտ Փարսադանեանը, պարզապէս փոխադրուած է մի ուրիշ աշխարհ: Մարդիկ այդ երեւոյթը «մահ» բառով են բնութագրում: Բայց այդ հասկացողութիւնը չի վերաբերում Ալբերտին, որովհետեւ նա չի մահացել, այլ պարզապէս մեռել է:

Մեծութիւնները մեռնում են, բայց չեն մահանում...: Մահանում են նրանք, ովքեր իրենց կեանքում ո'չ մի պտղաբեր ծառ չեն տնկել հետագայ սերնդներին իմացական ու հոգեկան աւելի ապահովելու հաշուին, ո'չ մի ներդրում չեն աւելի շահ մարդկութեան մտաւոր ու բարոյական բարօրութեան:

Իմ վաղեմի, իմ սիրելի, իմ թանկագին ընկեր, մի քանի ժամից վերջնականապէս հեռանալու ես այս աշխարհից, քո հարազատներից եւ ինձնից: Հրաժեշտի վերջին խօսքերն ուզում եմ տալ քո սիրած բանաստեղծներից Յովհաննէս Թումանեանին.

Մենք ամենքս հիւր ենք կեանքում

Մեր ծննդեան փուլ օրից, Յերթով գալիս, անց ենք կենում էս անցաւոր աշխարհից: Անց են կենում սէր ու խնդում, Գեղեցկութիւն, գառն ու գահ, Մահը մերն է, մենք մահիմք, Մարդու գործն է միշտ անմահ: Գործն է անմահ, լաւ իմացք, Որ խօսուում է դարեդար, Երնել նրան, որ իր գործով Կ'ապրի անվերջ, անդադար: Դողը թեթեւ թող գայ վրադ, իմ թանկագին ընկեր:

Յաւիտեանական հանգիստ քո տառապած ոսկորներին:

«Յիշատակն արդարոց, օրհնութեամբ եղիցի»:

Ասատուր Կիւզելեան 16 Մարտ, 2009

Շնորհահանդէսի աւարտին տեղի ունեցաւ ճոխ ընդունելութիւն:

ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ՝ ԶՏԱՐԻՒՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՈՒ ՅԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Շարունակում է 8-էն

տոքթ. Սաղրեանին, հակառակ անոր, որ անիկա գեղարուեստական գրող չէր եւ Հնչակեան կուսակցութեան կը պատկանէր: Արմինին եւ իմ որոշումը, մեր բժիշկ ընկերոջ համահայկական ոգիէն ու կազմակերպչական կարողութենէն թելադրուած էր:

Յարութիւն Սաղրեան գտարիւն մտաւորական մըն էր ամէն բանէ առաջ: Աշխոյժ, լաւատես, գործունեայ ու հաւատաւոր հայ մշակութային գործիչ: Արդար ըլլալու համար, մեր բժիշկ բարեկամը բախտաւոր էր իրեն կողակից ունենալով Ատրինէի նման մտաւորական ըմտանիքի մը դուստրը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՈՒՐՈՒԿԱԾ ՅԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Շարունակում է 8-էն

դովի ատենապետ՝ Պերճ Շահպագեան: Ան իր ելույթին մէջ առանձնապէս նշեց որ Հ.Բ.Լ.Մ.ը ըլլալով ապաքաղաքական կառույց, կը հասնի Հայաստանի եւ արտերկրի հայութեան զանազան կարիքներուն: Պերճ Շահպագեան միաժամանակ ողջունեց Ասպետներու համախմբումի նախաձեռնութիւնները հայոց ցեղասպանութեան ճանաչման գործով նորանոր զարգացումները հանրութեան իրազեկ դարձնելու գծով:

Ասպետներու համախմբումի ատենապետ Գուրգէն Պէրքասար, ողջունելէ ետք ներկայ խոսուներամ բազմութիւնը անդրադարձաւ երեկոյի կարեւորութեան մասին որ սերտօրէն առնչուած է հայ դատի անժամանցելի հարցին հետ: Ան նահատակ լրագրող Հրանդ Տինգի մասին խօսելով կարեւորութեամբ նշեց անոր օգտակար ներդրումը Թուրքիոյ մէջ հայոց ցեղասպանութեան հարցի արծարծման մէջ:

Օրուան առաջին բանախօսն էր Դոկտ. Ճէնկիզ Ազիթար: Ան յայտնեց թէ կեանքի կոչուած է Հրանդ Տինգի անուան հիմնարկութիւնը, որուն նպատակն է շարունակել հայոց ցեղասպանութեան ճանաչման գծով նահատակ լրագրող գնահատանքով արտադաստիակեցաւ անցեալ տարի՝ հայ ժողովուրդէն ներողութիւն խնդրող 30,000 հոգիներու ստորագրութիւնները հաւաքող արշաւի հեղինակ Ալի Պայրաձօղլուի մասին, որուն աջակիցներէն մին եղած էր նոյնինքն Ճէնկիզ Ազիթարը: Արդարեւ, քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը լուսաբանող բազմաթիւ յօդուածներ եւ գրութիւններ սկսած են հրատարակուել Թուրքիոյ մէջ: Տակաւին սկիզբն ենք երկար ճանապարհորդութեան մը: Թուրքերն սկսած են նոր հասկացողութիւն ցոյց տալ: Կ'ուզեն գիտնալ թէ ինչ

Անոնց գաւակները նոյնքան բախտաւոր էին այդպիսի մթնոլորտի մէջ հասակ նետելով: Երեւոյթ մը, որուն մասին յաճախ Յարութիւն Սաղրեանը կը քաջկուտէի՝ ըսելով, թէ բուն փիլիսոփան ու մտաւորականը Ատրինէն է...

Անմոռանալի պիտի մնան Հրանդ եւ Մանուշ Սիմոնեաններուն, Սաղրեաններուն եւ մեր յարկին տակ ունեցած գրական երեկոները:

Պիտի կարօտինք նաեւ այդ հաւաքոյթները իր ասմունքներով ու գուարճախօսութիւններով ճոխացնող տոքթ. Արթին Սաղրեանին:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ բժիշկ:

պատահած է հայերուն, մասնաւորաբար Անատոլի մէջ...: «Յեղասպանութեան ճանաչումը թուրք ժողովուրդէն (ներսէն) պիտի գայ եւ ոչ թէ արտաքին՝ դուրսի պարտադրանքներէն...»:

Դոկտ. Ճէնկիզ Ազիթարի համաձայն յառաջիկայ Նոյեմբեր 6-7, Պողոսի չի համալսարանին մէջ, հանդիսաւոր կերպով պիտի նշուի Ատանայի Չարդի 100-ամեակը:

Փրոֆ. Գէորգ Պարտազճեան իր ելույթին մէջ դատապարտեց թրքական կառավարութեան ուրացումի քաղաքականութիւնը մեծ Եղեռնի ճանաչումի կապակցութեամբ: Ան դէմ արտադաստիակեցաւ նաեւ Թուրքիոյ կողմէ նախաձեռնուած պատմաբաններու յանձնախումբի մը ստեղծման մասին: Անհետեւ նկատեց նման մարմնի մը ստեղծումը, քանի որ եղածը կանխամտածուած մեծ ոճի մըն էր եւ Ապրիլ 24-ը արդէն սկսած է չիշատակուել նաեւ Պոլսոյ մէջ: Կարեւոր յայտնութիւն մըն էր հայ նահատակ գրողներու անուանացանկի երեւումը «Ակոս» թերթին մէջ:

Յարգելի բանախօսը շնորհակալութիւն յայտնեց Թուրքիոյ մէջ ներողութեան ստորահաւաքի արշաւը նախաձեռնողներուն: Յանդուգն գործ մըն էր, արժանի ամէն գնահատանքի: Ան դէմ արտադաստիակեցաւ նաեւ Եւրոպական Միութեան ներս թուրքիոյ մուտք գործելուն:

Փրոֆ. Գ. Պարտազճեանի շուրջ 45 վայրկեանի ելույթը համառօտապէս վերաբար մըն էր հայոց ցեղասպանութեան հետ առնչուող հարցերուն: Իրողութիւն մը, որուն համար կեանքի կոչուած են հայկական շարք մը կազմակերպութիւններ, որոնք միջազգային քաղաքական թատերաբեմին վրայ արդիւնաշատ ձեռքբերումներ սկսած են արձանագրել:

Հետաքրքրական ձեռնարկ մըն էր արդարեւ նուիրուած մեր անժամանցելի դատին:»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ
ԱՂԱԻՆԻ ՍԱԹԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով՝ Ս.Գ.Հ.Կ. «Փարամագ» մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Միասին Դեպի Նպատակակետ...

Բարձր Հովանաւորութեամբ՝

ԳԵՐՇՆ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ

*Հայց. Առաքելական Եկեղեցոյ
Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի*

Կազմակերպութեամբ՝

Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբին

Գեղարունստական Յայտագիր եւ Հիրասիրութիւն

Կատարողութեամբ՝

«Խաչատուրեան Դպրաց Դաս» Երգչախումբին

Ղեկավար՝ Բրշ. Սրեփան Սրկ. Կեօզումեան

«Արարատ» Երգչախումբին

Ղեկավար՝ Ալեկուշ Եղնազար

«Իրանահայ Միութեան» Երգչախումբին

Ղեկավար՝ Միքայէլ Աւերիսեան

Գալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան

«Կոմիտաս» Երգչախումբին

Ղեկավար՝ Կոմիտաս Քեշիշեան

Միրով կը հրաւիրենք Ձեզ ներկայ գտնուելու Առաջնորդանիստ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներու առաջին փուլի աւարտի արարողութեան

Կիրակի, Յունիս 28, 2009-ին, Երեկոյեան ժամը 6:00-ին
3325 North Glenoaks Blvd., Burbank

Մուտքը Ազատ

TOGETHER WE PROGRESS...

Under the Auspices of
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN
Primate of the Western Diocese of the Armenian Church
of North America

The Cathedral Fund Raising Committee

Cordially invites you to attend the opening ceremony of the completion
of the first stage of Cathedral Construction

Cultural Event & Reception

Sunday, June 28, 2009 at 6:00 p.m.

3325 North Glenoaks Blvd., Burbank

Free Admission